

ՄԱՆՈՒԷԼ ԱԳԱՄԵԱՆ

ՄԵԾ ԵՂԵՈՒՆ

ДУБЛЕТ

ՄԱՆՈՒԷԼ ԱԴԱՍԵԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆ

A II
68206 V



ԵՐԵՎԱՆ

2005

ՀՏԴ 891.981-2 Ադամեան

ԳՄԴ 84Հ - 6

Ա 192

Մանուէլ Ադամեան

Ա Մեծ Եղեռն /պիես/ /Ադամեան Մանուէլ/ - Եր., ՀՀ ԳԱԱ,
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
Նահապետ, 2005, 72 էջ:

Ա 4702080203
0076(01)-2005 2005թ.

ԳՄԴ 84Հ - 6

ISBN 99941-39-33-9

© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՍԻԱՄԱՆԹՕ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

ԱՐԱՔՍԻ ՉԻՊՈՒԳՔԵԱՐԵԱՆ (Դանիել Վարուժանի կողակիցը)

ԷՐԻՔԱ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ (Ռուբեն Սեաակի կողակիցը)

ԹԱԼԱԱԹ (Իտալիհատական թուրքիոյ մեծ վեգիբն ու ներքին գործոց նախարարը, Հայոց Սեծ Եղեռնի գլխատր ծրագրողն ու իրականացնողը)

ՀԱԶԱՐԱՊԵՏ ՖԱՆՐԻ ՊԷՅ (Օսմանեան բանակի յատուկ քննիչ)

ԵՈՒՆՆԷՍ ԼԵՓՍԻՈՒՄ (Գերմանացի հոգեւորական, հայասեր հասարակական գործիչ, արեւելագէտ)

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՈՂ (Յամիկ)

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄՈՂ (Համասփիւռ)

ՃԵՆԿԻԶ (Օսմանեան բանակի սպայ, Թալաաթի համհարզը)

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

(Պատմողներու երկխոսութիւնը)

Առաջին Պատմող (*Յասմիկ*):- 2005 թուական: Հայ ազգի երկնակամարին վրայէն դանդաղաքայլ անցան Հայոց Մեծ Եղեռնի 90 տարիները: Յիշեալ տարիներու առաջին տասնամեակները եղան ծանր, դաժան, հիւժող ու տառապալից: Արեւմտահայութեան կարեւոր մէկ հատուածը սփռուեցաւ աշխարհի չորս ծագերը՝ մէկուկէս միլիոն նահատակներու վիշտը իր կուրծքին տակ:

Երկրորդ Պատմող (*Համասպիլա*):- Արեւելեան Հայաստանը եւս անմասն չմնաց Եղեռնի արկաւիրքէն, թէւ ոչ արեւմտահայ եղբայրներուն ու քոյրերուն մման: Յեղասպանութեան որմնադիրներ՝ Էնվերը, Թաալաթն ու Ճեմալը ծրագրած էին հայ ժողովուրդը ջնջել երկրի վրայէն: Ջնջել ամէն գնով՝ մինչեւ այդ մմանը չտեսնուած գազանային միջոցներով:

Առաջին Պատմող (*Յասմիկ*):- Պոլսէն միմչեւ Սեբաստիա, Վան, Սուշ, Սասուն մինչեւ Տիգրանակերտ ու Պոյազիտ, յետոյ նաեւ ամբողջ Կիլիկիայէն արմատախիլ եղան մեր ժողովուրդի գաւակները: Աւելի քան 200 հայ մտատրականներ, 1915 Ապրիլի 24-ին ձերբակալուելով արքայութեան անապատներ եւ գոհերը եղան կեռ եաթաղանին: Մեծատաղանդ գրողներ՝ Գրիգոր Զօհրայ, Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Սեակ, Ռուբէն Զարդարեան, Երուխան: Եւ դեռ շատ ու շատ երեւելիներ Յեղասպանութեան սարսափը տեսան, հուսկ՝ նահատակուեցան յանուն ազգի, հաւատքի ու հայրենիքի: Իսկ հանճարեղ Կոմիտաս Վարդապետ Եղեռնի տարին թէւ ողջ մնաց, սակայն իր ապրած սարսափը, իր տեսած՝ ջարդի սրտաճմլիկ տեսարանները՝ ազգին նահատակութիւնը զինք հասցուցին հոգեկան հաւասարակշռութեան տատանումներու եւ վերջին հաշտով անժամանակ մահացաւ Փարիզի հոգեբուժարաններուն մէջ: Հայ ժողովուրդը սակայն, իր մեծ երախտատրին աճիւնը փոխադրեց հայրենիք, ուր այժմ կը հանգչի խաղաղութեան մէջ:

Երկրորդ Պատմող (*Համասփիտ*).- Յատվ կը հաստատենք, թէ բազմաթիւ պետութիւններ տակաւին կը խուսափին ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը: Իսկ շնորհակալութեան խօսք ունինք բոլոր այն պետութիւններուն հանդէպ, որոնք արիութիւնը ունեցան հաստատելու Յեղասպանութեան: Շնորհակալութիւն յատկապէս արար ասպնջական ժողովուրդին, որ սիրով ընդունեց ու պահպանեց ջարդերէն հրաշքով ազատած մեր եղբայրներն ու քոյրերը: Թէեւ տեղ մը խիղճը մեռած կամ թմրած է, բայց ուրիշ տեղ մը արթուն է:

Առաջին Պատմող (*Յասմիկ*).- «Ով մարդկային արդարութիւն, թող ես քքնեմ քու ճակատին»: Սիամանթոյի այս տողերը գուցէ ծանր կը թուին, սակայն ըմբոստացող հոգիի անգուսպ արտայատութիւնն է: Երբ հրաբույսը կ'արթննայ, լաւան չի կրնար ընդերքի մէջ մնալ: Պիտի ժայթքի: Պիտի ժայթքի այրելու ու մոխրացնելու համար անարդարութիւնն ու անոր ասպետները:

Երկրորդ Պատմող (*Համասփիտ*).- Անարդարութեան ասպետները ոչ միայն դիմակ կը դնեն իրենց դէմքին, նաեւ քաղաքականութիւն կոչուած ասպարէզէն ներս կ'առնեն եւ կուտան: Ա՛ն է տո՛ւր, այս է հիմնականը անոնց համար: Եթէ շօշափելի շահ, օգուտ չկայ, ոտնակոխ կ'ընեն ե՛ւ ճշմարտութիւն, ե՛ւ ցեղասպանութիւն ե՛ւ հաւատք ե՛ւ գեղեցիկի բոլոր ստորոգելիները: Սիամանթօն իրաւունք ունի անարգանք շարտելու մարդկային արդարութեան ճակատին:

Առաջին Պատմող (*Յասմիկ*).- Համասփիտ, քոյր իմ: Թէեւ մենք հալածուած ու Եղեռնի զոհ դարձած սերունդի մը ժառանգներն ենք, սակայն նոյն Եղեռնը մեզ՝ մեր ազգը չկարողացաւ ընկճել: Եւ ասոր պատճառը այն է, որ մեր նախնիները, մեր հայրերն ու եղբայրները նենգ թշնամիի դէմ կռիւ տալով մահը ընդունեցին:

Երկրորդ Պատմող (*Համասփիտ*).- Այո, կը ձայնակցիմ քեզի իմաստուն քոյրիկ: Մենք կ'ապրինք ու պիտի ապրինք: Յեղին սիրտը կը շարունակէ բաբախել. եւ անմահն Վարուժան այսպէս կը պատգամէ՝

«Եղեզնեայ գրչով երգեցի փառքեր,
-Քեզի ընծա՛յ, իմ հայրենիք-
Սօսեաց անտառէն էի զայն կտրեր...

-Քեզ ընծա՛յ, հին հայրենիք-
Եղեզնեայ գրչով երգեցի բուրմեր,
Ընդ եղեզան փող լո՛յս ելանէր»:

Յասմիկ, բանաստեղծութեան վերջին տունը դուն ասմունքէ:
Առաջին Պատմող (Յասմիկ).-

«Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.

-Ձեզի ընծա՛յ, հայ մարտիկներ-
Գրիչս եղաւ անբող սրտերու հնոցի...

-Ձեզի ընծա՛յ, քաջ մարտիկներ-
Եղեզնեայ գրչով վրժ երգեցի,
Ընդ եղեզան փող բո՛ց ելանէր»:

(Առաջին եւ երկրորդ պատմողները՝ Յասմիկ ու Համասփիռ
դուրս կուգան)

(Բենը կը ներկայացնէ Դանիէլ Վարուժանի Պոլսոյ բնակարա-
նը, ներկայ են՝ Արաքսի Չիպուզբեարեան, Գրիգոր Զօհրապ,
Միսմանթօ. աւելի ուշ՝ ասոնց կը միանան Ռուբէն Սեւակ եւ
Էրիքա Չիլինկիրեան ապա Կոմիտաս Վարդապետ):

Արաքսի Չիպուզբեարեան.- Բարի եկաք սլարոն Զօհրապ եւ
դուք պարոն Եարճանեան: Միշտ պաշտօնական հրաւերի կը
սպասէք, որպէսզի այցելէք մեզի: Վերջապէս, Դանիէլը
(ակնարկելով իր ամուսնին՝ Դանիէլ Վարուժանին), յատուկ
հրաւերներ ուղարկեց, որպէսզի այս երեկոյ միասին ըլլանք:
Շուտով մեզ կը միանան նաեւ Չիլինկիրեան ամուլն ու Հայր
Կոմիտասը: Այդ մասին անշուշտ ձեզ արդէն տեղեակ պահած է
Դանիէլը:

Դանիէլ Վարուժան.- Արաքսին (ակնարկելով իր կողակիցին),
իրատունք ունի, սիրելիներ Գրիգոր եւ Ատոմ, անկախ բոլոր
պաշտօնականութենէ մենք պարտաւոր ենք ոչ թէ պարբերա-
բար, այլ առանց ժամանակ կորսնցներու՝ հանդիպիլ իրարու եւ
կարծիքներու փոխանակութիւն ունենալ: Հանդիպումներու
պարբերականութեան համար ոչ ոքի կը մեղադրեն: Նախա-
ձեռնութիւններ առնելը իրաքանչիւրիս պարտքն է:

Միամանքօ.- Ես լիովին համաձայն եմ ձեզ հետ, եթէ այս վերջին տարուան մասին է ակնարկութիւնը: Մինչ այդ գրեթէ բոլորս ալ երկարատեւ ճամբորդութիւններ կատարեցինք դէպի Եւրոպա կամ Միացեալ Նահանգներ: Իսկ հիմա որ Պոլիս կը գտնուինք, նոյնիսկ շաբաթական կազմակերպուած հանդիպումներն անհրաժեշտ են: Իսկ հիմա ծանր հրետանին (*ակնարկելով Չօհրապին*) իր կարծիքը թող յայտնէ:

Գրիգոր Չօհրապ.- (*Հանգիստ եւ հանդիսատք*) Նախ ուրախ եմ, որ Չիպուզքեարեաններու հայաշունչ յարկին տակ կը գտնուիմ այս երեկոյ: Նոր, քովնտի սենեակէն ականջիս հասան Վարուժնակին (*Դանիէլ Վարուժանի դստեր՝ առաջնեկին է ակնարկութիւնը*) եւ իր կրտսեր եղբօր Արմենին խօսակցութիւնը: Անոնք ի՛նչ ընտիր հայերէնով կը խօսէին իրարու հետ, ինչ փոյթ թէ պարզ ու երեխայական նիւթերու շուրջ էր խօսակցութիւնը: Միքելի Դանիէլ, տիկին Արաքսի այս բնակարանը մտալուաշունչ մթնոլորտ ունի: Այդ զգացած եմ իմ բոլոր այցելութիւններու ժամանակ: Աւելցնեմ նաեւ, որ Վարուժանի ամբողջ ստեղծագործութիւնը նորոգչական առաքելութիւն մըն է, յանուն հայ դարաւոր գրականութեան ապագայի: Անոր ստեղծագործութիւնը խորապէս ազգային երեւոյթ է, սակայն իր գաղափարներով համամարդկային բարձունքներուն կը մատչի:

Դանիէլ Վարուժան.- Չօհրապ, քու հեղինակատր կարծիքին կը սպասեմ մեր կազմակերպուած հանդիպումներուն համար:

Գրիգոր Չօհրապ.- Գիտէք, որ քիչ մը դանդաղ, բայց հաստատ կը խօսիմ: Շաբաթներէ ի վեր ճիշդ այդ մասին կը խորիճի եւ մեր կազմակերպուած հանդիպումները, շաբաթակուսն պարբերականութեամբ անհրաժեշտ կը գտնեմ:

Արաքսի Չիպուզքեարեան.- Պարոն Չօհրապ, ներողամիտ եղէք, կարճ հարցումով մը ընդհատեմ ձեզի, շաբաթ մը առաջ լրագիրները գրեցին դատարանին մէջ ձեր ունեցած կարեւոր յաջողութեան մասին: Կարելի՞ է ծանօթութիւններ տալ այդ մասին:

Միամանքօ.- Այո, ես ալ հետեւեցայ այդ լուրին: Եթէ դժուար չէ, հակիրճ պատմէ այդ մասին Չօհրապ:

Գրիգոր Զօհրապ.- Այն ինչ որ գրած էին հայ եւ թուրք լրագիրները, իրականութեան կը համապատասխանեն: Պաշտպանեալս, որ մարդասպանութիւն կատարած էր, արդարացոցի դատարանին մէջ, որովհետեւ ինքնապաշտպանութիւն էր կատարածը, ուրիշ ելք չէ ունեցած գոյութիւնը պահպանելու համար:

Դանիէլ Վարուժան.- Սակայն ինքնապաշտպանութեան վարկածը պիտի հիմնատրուէր: Դեռ ատէլին, այս ապականած երկրի ապականած արդարութիւնը ի՞նչպէս ընդունեց ինքնապաշտպանութեան աստուածատուր իրաւունքի, նաեւ բնագոյի էութիւնը:

Գրիգոր Զօհրապ.- Նախ յայտնեմ, թէ վերջ ի վերջոյ այս կայսրութիւնը ունի արդարադատութեան իր օրէնքները: Դիշդ է, հարցն այն է, որ առկայ պայմաններուն մէջ ինչպէ՞ս կը գործեն օրէնքները:

Արաքսի Չիպուզբեարեան.- Սեղադրեալի ազգային պատկանելիութիւնը ո՞րն էր արդեօք: Բոլորս ալ լաւ գիտենք, թէ ազգային պատկանելիութիւնը կարևոր դեր կ'ունենայ:

Սիամանթօ.- Մարդասպանութեան պարագային, այս կայսրութեան սահմաններէն ներս կը գործեն երկու չափի եւ երկու կշիռքի օրէնքը: Ես տեղին կը գտնեմ տիկին Արաքսիին հետաքրքրութիւնը:

Գրիգոր Զօհրապ.- Պատասխանեմ: Սեղադրեալը ազգութեամբ ո՛չ հայ էր եւ ո՛չ թուրք, այլ՝ քիւրտ, իսկ մահացողը զաւառացի թուրք մըն էր: Եւ իսկապէս, մեղադրեալը ինքնապաշտպանութեան համար կատարած էր սպանութիւնը: Չորս վկաներ կային, որոնց մէջ երկու թուրք, երկու քիւրտ եւ մէկ հայ:

Դանիէլ Վարուժան.- Սա կը նշանակէ, թէ պաշտպան փաստաբանի դերակատարութիւնը վճռող եղած է դատարանին մէջ:

Գրիգոր Զօհրապ.- Անշուշտ փաստաբանական փորձառութիւնս եւ մանաւանդ հեղինակութիւնս կարևոր ազդեցութիւն ունեցան դատաւորին վրայ: Անոնք զիս լաւ կը ճանչնային որպէս մեծ փորձ ունեցող փաստաբանի: Բայց այսքանը հաւանաբար բաւարար չէր: Անոնք լաւ գիտեն, թէ սերտ կապեր ունիմ վերի՛ն իշխանութեան հեղինակութիւններուն հետ: Հետեւաբար պար-

տաղրուեցան յարգել կայսրութեան արդարադատութեան օրէնքները:

Միամանքօ.- Գրիգոր, վերադառնանք մեր սկզբնական նիւթին: Վերջապէս ի՞նչ է կարծիքդ մեր այն հանդիմումներու մասին, որոնց քիչ առաջ ակնարկեցինք: Բոլորդ ալ լաւ գիտէք, թէ ես մեզ յուզող հարցերուն զգացական մօտեցում ունիմ, յաճախ կը մոռնամ դիւսնագիտութիւն ըստածը եւ կը պողոթկամ: Գրած բանաստեղծութիւններս սկսան հրաբուխի վերածուիլ:

Գրիգոր Զօհրապ.- Ես իմ սկզբունքային կարծիքս արդէն յայտնեցի քիչ առաջ: Կազմակերպուած հանդիպումները անհրաժեշտութիւն կը գտնեմ երկու պատճառով: Նախ, մենք գրողներ ենք եւ ամբողջ Պոլիսը, ինչպէս նաեւ գաւառը մեզի կը նայի: Մենք՝ բոլորս, այս պահուն այս յարկին տակ գտնուողներն ու բացակայ մեր գրչեղբայրներն են, որ պիտի առաջնորդեն հայ գրականութիւնը այս ակներուն վրայ, ուր, կ'ընդունիմ թէ շնչելն ու գործելը բաւական դժուարացած է: (*Պահ մը լռութիւն կը տիրէ. Զօհրապ մտածումի մէջ կ'իյնայ*):

Միմանքօ.- Զօհրապ, նշարունակէ խօսքդ, մեկնաբանելիք երկրորդ պատճառը գուցէ աւելի կարեւոր է, քան առաջին պատճառը ներկայ ժամանակներու մէջ:

Դանիէլ Վարուժան.- Արաքսի (*դիմելով կողակիցին*), հաճիս գաւաթ մը ջուր բեր Գրիգորին, հաւանաբար քիչ մը յուզուեցաւ: (*Տիկին Արաքսին դուրս կուգայ, ապա վերադառնալով գաւաթ մը ջուր կը մատուցանէ Զօհրապին*):

Գրիգոր Զօհրապ.- Ատոմ, մատնանշումդ ճիշդ էր: Մեր կազմակերպուած շաբաթական հանդիպումները աւելի քան անհրաժեշտութիւն են: Համաշխարհային պատերազմը սկսած է մոլեգնիլ: Օսմանեան կառավարութիւնը սերտ գործակցութեան մէջ է գերմանացիներուն հետ: Ռուսաստան միացած է անկլօֆրանսական դաշինքին՝ Անտանտին: Վերջերս կրկին հանդիպեցայ Թալաթ, Էնվեր եւ Գեմալ փաշաներուն հետ: Նախ ժամ մը *պրիւ* խաղցանք սպայից կեդրոնին մէջ, ապա երկար գլուցեցինք:

Արաքսի Զիպուգբեարեան.- Այսօրուայ լրագիրներու մէջ, կարդացի նաեւ Անատոլոյի տարածքին վրայ կատարուող տեղա-

շարժերու մասին: Սերաստիայէն ալ մայրս նամակ դրկամ էր ծանօթի միջոցով. ծանր մտահոգութիւնները ակնյայտ էին:

Միամանքօ.- Այս երկրէն՝ ես իմ վստահութիւնս ամբողջութեամբ կորսնցուցած էի: Գացի Ամերիկա, Պոսթոն, որպէսզի այնտեղ հաստատուիմ վերջնականապէս, սակայն Պոլիսը եւ յատկապէս մեր ժողովուրդը մագնիսի նման իրեն քաշեց զիս, վերադարձայ: Վերջը Աստուած բարին ընէ:

Դանիէլ Վարուժան.- Սիրելիներ, մտահոգիչ հարցերու մասին աւելի մանրամասն կը խօսինք երբ Սեւակը ժամանէ: Անոր կարծիքները եւս շատ կարեւոր են քաղաքական հարցերու կապակցութեամբ: Հեռատես մարդ է ան: Իսկ Հայր Սուրբին ներկայութիւնը, երբ ժամանէ, հոգեւոր մխիթարութիւն կրնայ ըլլալ: Հիմա քիչ մը գրականութեան մասին խօսինք: Վերջապէս գրականութիւնն ալ մեր ինքնութիւնը հաստատող կարեւոր միջոցներէն մէկն է օսմանեան տիրակալութեան մէջ:

Արաքսի Չիպուզքեարեան.- Ուրեմն ես հարց տամ պարոն Զօհրային. յարգարժան բարեկամ, վերջերս ի՞նչպիսի նորավէպերու վրայ կ'աշխատիս. մամուլը արդէն քեզ նորավէպերու իշխան կը կոչէ, որուն արժանի ես միանգամայն: Ես դեռ Սերաստիոյ Արամեան վարժարանի աշակետական տարիներուս հիացած եմ ձեր գործերով:

Գրիգոր Զօհրայ.- Եթէ պիտի խօսինք իմ ստեղծագործութիւններու մասին, մէկ բան կրնամ յայտնել, թէ կը շարունակեմ գրել: Թէ նորավէպի իշխան եմ, այդ ընթերցողի ու քննադատութեան կարծիքն է, որուն համար շնորհակալ եմ: «Ճիտին Պարտքը», «Ժամին Բակը», «Փոստալ», «Անդրշիրիմեան Սէր», «Այրին» նորավէպս եւ անշուշտ միւս ստեղծագործութիւններս ընդունելութիւն գտած են ընթերցողներու մօտ: Գնահատական նամակներ ստացած եմ հրապարագրական յօդուածներուս, ճանապարհորդական յուշերուս համար: «Գիրեր Պատերազմի Դաշտէն» հրապարագրական յօդուածներս յատկապէս, որոնք կ'առնչուին պատերազմին, ըստ իմ ստացած բազմաթիւ նամակներուն, խիզախութիւն է ներկայ պայմաններուն մէջ: Փարիզի մէջ, ծածկանունով՝ 1913-ին լոյս տե-

սամ «Հայկական Հարցը Վատերագրերու Լոյսին Տակ» ֆրանսերէն գրքոյկը ներդրում կը նկատեմ Հայկական Հարցի կապակցութեամբ: Սակայն կարեւորը Պոլսոյ ներկայ գրական մթնոլորտն է ընդհանրապէս, որը անհրաժեշտ աշխուժութիւնը ցոյց չտար հասկնալի պատճառներով: Ալ ինչ կրնամ ըսել այժմ այսքանը: Աւելիին տրեւմադրութիւն չունիմ:

Դանիէլ Վարուժան. - Ես կ'ուզեմ քանի մը խօսք ըսել Սիամանթոյի մասին: Տարիներ առաջ երբ ժընել գացի, կարծես ուխտատուր էի, քանզի պիտի տեսնէի հայ ըմբոստներուն՝ յեղափոխական գործիչներուն օճախը: Տեղ հասնելուս յաջորդ օրն իսկ նախ ուզեցի տեսնել Ատոմ Եարճանեանը՝ Սիամանթօն: Գտայ զինքը Լեմանի գեղածիծաղ ափերուն վրայ: Հայ գրականութեան այս երախտատրի ամբողջ ստեղծագործական կեանքը դիւժազներգութիւն մը եղաւ, թէն՝ դասական իմաստով դիւժազներգական գրական սեռին շիտեւեցաւ, գրեց պարզապէս «Իլիական»ի կամ «Հայկ Դիւժազն»ի հեղինակներուն աշակերտելու մտօք: Եարճանեան՝ յեղափոխութիւնը ոգեկոչող երգիչն է, միեւնոյն ատեն հայ ոգիի, հայրենասիրութեան քնարերգուն. անոր «Մուրբ Մերտայ» ստեղծագործութիւնը մեր գրականութեան գոհարներէն մէկն է՝

«Մերտայ, հայ դարերու դիմաց կեցող»

«Դո՛ւն ադամանդեայ ապառաժ». կամ՝

«Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան»

«Դուն անբաւ բաւիղ տետղութեան,»: Բանաստեղծական ինչպիսի՜ հոյակապ պատկերներ:

Արաքսի Չիպուզեարեան. - Ինչպէս Գրիգոր Զօհրապի, այնպէս ալ Սիամանթոյի հիացողներէն եղած եմ: Երբ առիթով մը Դանիէլին հետ կարծիքներու փոխանակութիւն կ'ունենայինք անոր ստեղծագործութիւններու մասին, ամուսինս ըսաւ, թէ «Սիամանթոյի տաղանդին ամենէն տիրական գիծը երեակայութիւնն է: Ան իրերը բոլորովին նոր եւ իւրայատուկ ձեւով կը գունազեղէ եւ կը դասատրէ»: Ես ալ պիտի աւելցնեմ, որ Սիամանթոյի երգը ռազմի շեփոթին երախտն արտահոսող մարտահրաւերն է:

(Տան դուռը կը զարնուի: Տանտիրուհին դուրս կուզայ: Պահ մը ետք միասնաբար ներս կը մտնեն Ռուբէն Սեւակ, իր կողակիցը Էրիքա Չիլինկիրեան, իրենց հետ է նաեւ Կոմիտաս Վարդապետ):

Կոմիտաս Վարդապետ.- Ողջոյն ձեր բոլորին: Ուրախ եմ կրկին հանդիպելու՝ Պոլսոյ մեր հայ համայնքի արժէքատու մտաւորականութեան ներկայացուցիչներուն: Պարոն Սեւակն ու իր ազնուափայլ կողակիցին հանդիպեցանք արդէն սլատրիարքարանի շէմին: Անոնք ինձ իրենց վարձած կառքով միասին բերին այստեղ: Կրկին կը յայտնեմ իմ ուրախութիւնը այս հանդիպման համար:

(Դանիէլ Վարուժան, յանուն ներկաներու կը պատասխանէ՝ «Աստուած օգնական Հայր Սուրբ» ապա բոլորը իրենց տեղերը կը գրաւեն):

Արաքսի Չիպուզքեարեան.- Բարի եկաք մեր օճախը Հայր Սուրբ, սիրելի Էրիքա եւ յարգելի բժիշկ *(ակնարկելով Ռուբէն Սեւակին)*: Կը սպասէինք ձեզ, ես այդէն անհամբեր էի: Տանտիկին եմ, պարտաւոր եմ հիւրասիրել հիւրերս: Թէեւ պարոն Զօհրայն ու պարոն Եարճանեանը ատելի կանուխ եկան, բայց պատշաճ հիւրասիրութիւն մը կատարելու համար սպասեցի ձեզի: Ներող եղէք, դուք ձեզ ազատ զգացէք. ես շուտով կը վերադառնամ: *(Դուրս կուզայ)*:

Ռուբէն Սեւակ.- Լաւ որ այս գիշեր հաւաքուեցանք: Ըսելիք շատ բաներ կան: Արթուն պիտի մնանք, դանակը այլեւս հասած է ոսկորին: Բանաստեղծութիւն, պատմուածք ու վէպ գրելը կարեւոր է, սակայն այս օրերուն ատելի կարեւոր գործ կայ: Ներեցէք, որ քիչ մը տաքարիւն եմ: Հաւանաբար վերջին ըսուելիքը սկիզբէն կ'ըսեմ:

Միամանքօ.- Այո, Ռուբէն, ես ալ քեզ նման տաքարիւն ու անհամբեր եմ: Համամիտ եմ տեսակէտներուդ: Բոլորս ալ շատ գրեցինք ու պիտի շարունակենք գրել, բայց այսօր շատ ատելի կարեւոր գործ կայ:

Էրիքա Չիլինկիրեան.- Անուղղակի ճանապարհով, երկ Զուլցերիայէն գերմանատառ թերթեր ստացայ: Գերմաներէնը, գիտէք, որ իմ մայրենի լեզուն է. եւ լաւ կը հասկնամ այդ լեզուով

գրուած յօդուածներուն միտք բանին: Նախ յայտնեմ, որ Թուրքիոյ գաւառներու հայութեան մասին լրատուութիւնը աւելի քան մտահոգիչ է: Ես պիտի ըսէի խիստ յռետեսական ու վախազդու: Իսկ գրուած յօդուածագիրները մօտիկ ապագայի համար կը նախատեսեն առաւել վտանգաւոր օրեր: Ամուսինս՝ Ռուբենը հիմա քուն չունի: Ինչ ընելիքը չի գիտեր: Ինչպէս ծանօթ է ամիսներէ ի վեր արդէն ձերբակալուած են խումբ մը հայ քաղաքական գործիչներ, Ռումանիոյ մէջ գաղտնի համագումար մը կազմակերպելու մեղադրանքով: Անոնց մէջ կը գտնուին քաղաքական շրջանակներուն ծանօթ ղեմքեր, որոնց շարքին՝ Փարամազ՝ Կովկասցի Մատթէոս Սարգիսեան, արաբկիրցի Արամ Աչըքլաշեան, կեսարացի Յովհաննէս Ստեփան Եղիազարեան, Պիթլիսցի Սմբատ Գլըճեան, արաբկիրցի Հրանդ Եկաւեան, Երուանդ Թօփուզեան, Տօթթոր Պէննէ: Եւ այսպէս՝ քսան անուններ:

Կոմիտաս Վարդապետ. - Հաւանաբար յիշեալ մտահոգիչ կացութեան մասին, դուք մինչեւ մեր հասնիլը բաւական խօսած էիք, այդ է պատճառը, որ մենք անմիջապէս կլանուեցանք այդ մթնոլորտէն: Իմ կողմէս յայտնեմ, որ պատրիարքարանի մէջ խոր մտահոգութիւն կը տիրէ: Գաւառներէն եկող լուրերը ծանր մտատանջութիւն կը պատճառեն Պատրիարք հօր:

Դանիէլ Վարուժան. - Մենք գրողներ ենք, մտատրականներ: Մեր զէնքը գրիչն է, զոր օգտագործեցինք ու պիտի շարունակենք օգտագործել ժողովուրդը արթնցնելու եւ գիտակցութեան հրաւիրելու համար: Սակայն յաջորդ քայլը ի՞նչ է: Պիտի գիտակցինք, որ գործնական ինքնապաշտպանութիւնը զէնքի ու զրահի հետ կապուած է: Ո՞վքեր պիտի առաջնորդեն հալածանքի ու արխունահեղութեան ենթարկուող ժողովուրդը:

Գրիգոր Չօհրապ. - Սիրելիներ՝ Ռուբեն, Էրիքա եւ Դանիէլ այն ինչի մասին որ որ րոք մտահոգութեամբ խօսեցաք, զոնէ ես աւելիով տեղեակ եմ: Շարաք գիշերները, որոշակի յաճախականութեամբ Պոլսոյ սպայից տան մէջ կը հանդիպիմ Թալաւաթին: Ծանօթ է, թէ ես անձնական բարեկամութիւն ունիմ ներքին գործոց նախարարին հետ: Մեր խօսակցութիւնները թէւ ձեռով մը բարեկամական սկիզբ կ'ունենան, սակայն իրենց աւարտին

կը հասնին բաւական լարուած: Ես ալ շատ յոռետես եմ գալիք օրերու կապակցութեամբ:

(Արաքսի Չիպուգքեարեան ներս կը մտնէ ու կը սկսի հիւրասիրել ներկաները, ապա կը գրաւէ իր տեղը)

Կոմիտաս Վարդապետ.- Մտահոգիչ ուրիշ պարագայի մը ես կ'ուզեմ անդրադառնալ. ես իմ կազմած երգչախումբով բազմաթիւ համերգներ տուած եմ այստեղ՝ Պոլիս, ինչպէս նաեւ Ատապազար, Պարտիզակ եւ Թուրքիոյ այլ շրջաններէն ներս: Շաբաթ մը առաջ առանց պատճառները յիշելու, ներքին գործոց նախարարութիւնը կտրականապէս արգիլեց իմ երաժշտական գործունէութիւնը: Նախատեսուած համերգն ալ ջնջուած է անորոշ ժամանակով:

Ռուբէն Սեւակ.- Ես ալ անւրջնեմ, որ Սուրբ Փրկիչ հիւանդանոցի կողմէ ծրագրուած դասախօսութիւններուս շարքը բժշկական ժամանակակից խնդիրներու մասին, արգիլուեցաւ նոյն նախարարութեան կողմէ:

Էրիքա Չիլինկիրեան.- Ռազմաճակատներուն վրայ պատերազմական գործողութիւնները կը սաստկանան: Ռուսական ճակատի վրայ նոր տեղաշարժերու մասին կը հաղորդէ եւրոպական մամուլը: Թուրքիա անելի գործնական կը դառնայ իր դաշնակիցներուն ռազմական եւ այլ տեսակի օգնութիւններ հասցնելով: Ռուս-թուրքական սահմանին այս կողմը, յատկապէս հայերու համար խիստ վտանգատր դարձած է:

Միամանթօ.- Վտանգը իր տարբեր երեսներով միշտ առկայ էր արդէն:

Էրիքա Չիլինկիրեան.- Այս պարագային, կ'ենթադրեմ, որ ստեղծուած վտանգը շատ անելի տեսիլն է քան Ապտիլ Համիտի կազմակերպած կոտորածները:

Ռուբէն Սեւակ.- Ըիշդ է Էրիքային կատարած վերլուծութիւնը: Արեւմտահայութիւնը բնաջնջելու գործընթացը սկսած է: Կատարուած արքայները, պատերազմական գօտիէն մասնատրապէս հայ բնակչութիւնը ապահով վայրեր փոխադրելու սեւ ծրագրին գործնականացումը անելի սարսափելի է քան սուլթաններուն կազմակերպած կոտորածները: Բոլոր երեւոյթները բացայայտ ցոյց կուտան, թէ իտտիհատականները Թուրքիոյ

մէջ կը ճանչնան միմիայն օսմանցիութիւնը, այսինքն թուրքութիւնը: Հայ, յայն, ասորի, ակեի, լազ եւ այլ հասկացութիւններ պիտի ձուլուին օսմանցիութեան մէջ: Այսպիսի ծրագիրներ լուծելու թրքական տարբերակը ազգերու, կամ փոքրամասնութիւններու բնաջնջումն է:

Դանիէլ Վարուժան.- Ռուբէն, երբ նման հարցեր արծարծուին, իմ հարցումս նոյնն է՝ ի՞նչ ընել, ի՞նչպէս հակադարձել, կամ վերջապէս ի՞նչպէս պաշտպանուիլ:

Արաքսի Չիպուզբեարեան.- Ես այնպէս կը տեսնեմ, թէ գաւառի, կամ սահմանամերձ շրջաններուն հայութիւնը վտանգուած է ընդհանրապէս: Ես ալ համաձայն եմ ամուսինիս՝ Դանիէլի տեսակէտին, ի՞նչպէս օգնութեան հասնիլ վտանգուած շրջաններուն:

Կոմիտաս Վարդապետ.- Ես քաղաքականութենէն հեռու եմ, նուիրքուած եմ հոգեւոր, դասական եւ ժողովրդական երաժշտութեան: Սակայն, ներքին զգացողութիւնս այն է, որ ինչպէս գաւառները, Պոլիսն ալ վտանգուած է: Պատրիարքը նոյն մտահոգութիւնը ունի: Թուրքական *խաֆիէները*՝ լրտեսները կը վլխտան պատրիարքարանի շուրջը: Ներքին գործոց նախարարութենէն օր ու մէջ գրեթէ՝ ազդարարութեան բնոյթ կրող հրամանագրեր կուզան:

Գրիգոր Չօհրապ.- Այն հարցերու մասին, որ մտահոգութիւններ յայտնեցիք, առաւել կամ պակաս չափով հիմնաւորուած են: Ինչպէս արդէն դիտել տուի այսօր, ես հինէն իվեր բարեկամական կապերու մէջ եմ խտրիհատական պարագլուխներուն հետ: Ապտիլ Համիտի դէմ իրենց բռտն պայքարի օրերուն, անոնք իմ խորհուրդներուն բազմիցս դիմեցին, ես իսկապէս օգնեցի իրենց եւ այսօր, ինչ ալ պատահի գոնէ անձիս հանդէպ կը կարծեմ, թէ բախտասպարտ են: Պիտի աշխատիմ Թալաաթ փաշային հետ վճռական հանդիպում մը ունենալ եւ բաւական խիստ խօսիլ: Վերջապէս պիտի հասկնամ, ո՞ր է իր երախտասպարտութիւնը:

Միամանթօ.- Չօհրապ, դուն բոլորէս անելի քաղաքագէտ ես, օսմանեան խորհրդարանի անդամ, իրաւաբան Հայակական Հարցի Էութեան գիտակ, միթէ՞ կը հաւատաս Իտտիհատ վէ

Թերաքքը կուսակցութեան պարագլուխներու անկեղծութեան եւ յատկապէս Թալաաթի երախտապարտութեան: Ես յոռետես եմ: Արաքսի Չիպուզքեարեան.- Պարոն Չօհրապի եւ Թաալաթի յատուկ հանդիպման մէջ անպատեհութիւն մը չկայ, թող հանդիպին, սակայն գաւառի հայութեան օգնութիւն հասցնելու ծրագիրը պիտի չուշանայ:

Էրիքա Չիլինկիրեան.- Ես միամիտ մը չեմ հաւատալու քաղաքականապէս խիստ վտանգաւոր մարդոց՝ այս պարագային Իտալիաառի առաջնորդներուն: (*Խօսքը ուղղելով Չօհրապին*) պարոն Չօհրապ, իմ նախագագացումս այն է, որ Պոլսոյ մէջ առաջին հերթին անձնապէս դուք վտանգուած էք: Վտանգուած են նաեւ այս սենեակին մէջ եւ այստեղէն դուրս գտնուող բոլոր հայ մտատրականները:

Ռուբէն Չիլինկիրեան.- Էրիքան ու ես նոյն եզրակացութեան յանգած ենք: Եւ կը կրկնեմ իր ըսածները՝ վտանգուած ենք բոլորս անխտիր: Պատերազմ է եւ սլատերազմներու ժամանակ ամենէն աժան բանը մարդն է, իսկ այս երկրին մէջ ա՛յս ժամանակահատուածին՝ հայ մարդն է ամենէն աժանը:

Կոմիտաս Վարդապետ.- Ես կ'ուզեմ կրկնել տիկին Արաքսիին եւ պարոն Վարուժանին ըսածները. ի՞նչպէս օգնութեան հասնիլ վտանգուածներուն, ի՞նչպէս պաշտապանուիլ երբ վտանգը աւելի մեծնայ եւ սլատէ ամբողջ Արեւմտեան Հայաստանը, Կիլիկիան եւ հասնի մինչեւ Պոլիս:

Դանիէլ Վարուժան.- Եթէ մեր անձերն ու ընտանիքները փրկելու մասին պիտի մտածենք, լաւագոյն միջոցը վաղն իսկ հեռանալ է այս երկրէն: Սակայն այդ մասին մտածելն իսկ յանցագործութիւն է: Կասկածէ դուրս է, որ պիտի մնանք մեր ժողովուրդի կողքին: Բայց ժողովուրդի կողքին պարզապէս մնալը, ի՞նչ արդիւնք պիտի տայ: Օգնութեա՞ն կանչենք օտար դեսպանատուները: Խիստ կասկածելի է օտարին վստահիլը: Կը մնայ գէնքը՝ զինեալ ինքնապաշտպանութիւնը: Չօհրապ, խօսիր, ի՞նչ է կարծիքդ:

Գրիգոր Չօհրապ.- Սիրելիներ, նախ պիտի զիտակցինք, թէ գոնէ Պոլսոյ մէջ զինեալ ու վճռական ինքնապաշտպանութեան համար արդէն ուշացած ենք: Երկրորդ, ամենացաւալին այն է,

որ պատերազմ է եւ այն ալ համաշխարհային պատերազմ: Թուրքիան զինուած է մինչեւ ատամները եւ իր կատարածին ու կատարելիքներուն համար ոչ որի պատասխան տուաւ, կամ պիտի տայ: Ես ինձ այս աստիճան ընկճուած չէի զգացած: Սակայն պիտի փորձեմ չափուիլ զայլերու ծանօթ ոհմակիւն հետ:

Կոմիտաս Վարդապետ. - Չինեալ պայքարը ինձ ալ կը խանդավառէ, թէւ հոգեւորական եմ: Ես կը միանամ պարոն Վարուժանի այն տեսակէտին, թէ իւրաքանչիւր հայ գրող, արուեստագէտ, մտատրական կամ ազգային գործիչ պիտի չհեռանայ իր ժողովուրդէն: Արդ, վճռականօրէն կը յայտարարեմ, որ ես պիտի մնամ Պոլիս, ինչ ալ պատահի:

Ռուբէն Սեւակ. - Գորշ գայլը ահա կատղած է: Երանի, թէ անցեալին հաւատայինք Ապտիւլ Համիտի դէմ յեղափոխութեան ելած Իտտիխատ վէ թերաքքը կոչուած տականքին: Բայց, ինչ որ ալ ըլլան պարագաներն ու պայմանները, պիտի դիմադրենք: Գիմադրելու համար ելքեր ուշ չէ: Եթէ պիտի գամ մեզ ու մեր հարազատները մեր աչքերուն առջեւ խողողելու, պիտի դիմադրենք ամէն զնով: Սահ կայ, մա'հ ալ կայ: Աւելի լաւ է պատուով մեռնիլ, քան թէ մեր վիզը եաթադանին յանձնել:

Արաքսի Չիպուզքեարեան. - Պարոն Սեւակ, եթէ հարցը մինչեւ այնտեղ պիտի հասնի, ես ալ պատրաստ եմ պատուովս մահանալու: Վարուժնակս, Արմէնս, ամուսինս կամ իմ անձը եթէ վտանգուած են, դիմադրութենէ ուրիշ ելք չմնար: Սակայն գաւառը եւս կը մնայ մեծ մտահոգութեանս առարկայ: Նոյն վտանգը տակաւին այստեղ այնքան ալ զգալի չէ: Գաւառը աւելի մեծ չափերով պիտի կազմակերպուէր:

Էրիքա Չիլիճկիւրեան. - Տիկին Արաքսի, համոզուած եմ, թէ որպէս մարդ եւ յատկապէս որպէս հա'յ մարդ պատրաստ ես ինքնապաշտպանութեան: Բայց, այն տեսակէտդ, թէ բուն վտանգը գաւառի մէջ է հիմա, այնքան ալ իրատեսական չէ: Բիշ առաջ ըսուեցաւ, թէ վտանգուած է նաե'ւ Պոլիսը: Մեզմէ ոչ որ թող միամիտ ըլլայ: Կը կրկնեմ, Պոլիսը վտանգուած է: Թալաաթի, Էնվերի ու Գեմալի համար գերագոյն սրբութիւնը օսմանցիութիւնն



11
90289

է: Մնացեալը՝ ընկեր, բարեկամ, երախտասայարտութիւն խաբուսիկ են:

Դանիէլ Վարուժան.- Հայր Սուրբ (*ղիմելով Կոմիտաս Վարդապետին*), հին հայկական երաժշտական խազերու վերժամման ձեր գիտական հետազոտութիւնները ո՞ր հասան: Եթէ եզրակացնէք այդ հետազոտութիւնները եւ հրապարակէք, քաղաքակիրթ աշխարհը անգամ մը եւս պիտի խոնարհի հայ մշակոյթի մեծութեան նաեւ ձեր առջեւ: Իսկ սա պահուն շատ կը խնդրեմ ձեր գողտրիկ երգերէն մէկը միասնաբար երգել: Ես այսօր ձեզ նկատի չունիմ որպէս վարդապետի: Դուք մեր օրերու հայ հանճարեղ յօրինող-ստեղծագործողն էք նաեւ երաժշտութեան տեսաբանը: Առանց ձեր մեծ տաղանդին, պիտի չունենայինք երաժշտական այն գոհարները, որոնք այժմ հայ ազգի սեփականութիւնն են: Մենք պահ մը կը դառնանք ձեր այս իւրայատուկ երգչախումբին անդամները: Համոզուած եմ բոլոր ներկայները համաձայն են հետս:

Կոմիտաս Վարդապետ.- Ես թէւ հոգետրական եմ, միեւնոյն ատեն արուեստագետ, ունիմ իմ ինքնուրոյն կեցուածքը ազգիս շահերն ու անվտանգութիւնը պաշտպանելու գծով: Ծնողներս Քէօթահեաօցիներ են, ես ծնած եմ նոյն գիւղաքաղաքին մէջ: Քէօթահեաօցի խնցեգործութիւնը, կամ բրուտագործութիւնը հասցուցած են զեղեցիկ արուեստի աստիճանին, իր բոլոր նրբութիւններուն: Միեւնոյն ժամանակ յայտնեմ նաեւ, թէ անոնք քաջամարտիկներ եղած էին, ու են: Հարեան թուրք գիւղերը միշտ հաշուի կ'առնէին քէօթահեաօցիներու բռունցքը: Կը կրկնեմ, ես քէօթահեաօցի եմ: Իսկ որպէս հայ հոգետրական, քրիստոնեայ, աղօթող եմ, որ Աստուած խիղճը արթնցնէ այն բոլոր ղեկավարներուն, որոնք սուրով եւ հուրով կ'ուզեն իշխել ժողովուրդներուն վրայ:

Պարոն Չիպուզբեարեան (*ղիմելով Դանիէլ Վարուժանին*), հին հայկական երաժշտական խազերու գաղտնիքը մօտիկ ապագային վերջնականապէս պիտի լուծեմ: Հիմնական գործը աւարտած է միայն պիտի կատարեմ հիմնական վերստուգում: Գալով խորհրդանշական երգչախումբին, եթէ պատրաստ էք երգելու, կը ղեկավարեմ ձեզ, անձամբ մասնակցելով նաեւ երգի

կատարման: Կը կարծեն, թէ բոլորիդ ալ ծանօթ է «Սօնա Եար» երգը, հանգիստ ու մեղմ ձայնով երգենք: (*Երգեցողութիւնը կը կատարուի, Կոմիտաս Վարդապետի ազդանշանէն ետք*):

Միամանքօ.- Յուզուած են մեր երգչախումբի գեղեցիկ ելոյթով: Սակայն վերադառնանք քաղաքականութեան: Չօհրապ, խորհրդարանին մէջ, օրակարգի հարց չեղա՞ւ, ամէն օր անգի մեծ թիով հայերուն բանակի շինարարական ստորաբաժանումներուն մէջ կատարած տանջալի գործերը: Հազարատրներ կը գոհուին այդ կերպ:

Գրիգոր Չօհրապ.- Ատոմ, նման հարցեր, այս օրերուն օրակարգի բերելու փորձն իսկ ես ալ ի՛մ կողմէս յայտնեմ թէ միամտութիւն է: Այդ ո՞վ թոյլ կուտայ, որ օրինակ ես, նման հարց բարձրացնեմ: Ճիշդ է, Թւրքիոյ մէջ 1908-ին սահմանադրութիւն հռչակուեցաւ, այժմ օսմանեան խորհրդարանը ժողովրդավարութեան պիտակ ունի, սակայն անոնք ձեւականութիւններ են: Խորհրդարանի օրակարգին կը բերուին եւ մանաւանդ դրական լուծում կը գտնեն բոլոր այն հարցերը, որոնք նախապէս ծանօթ եռեակին՝ Թալաաթի, Էնվերի, Ճեմալի օրհնութիւններուն կ'արժանանան: Ի՛նչ ըրածը, կամ ընելիքը այն է, որ համոզեմ վերոյիշեալները, եթէ հնարաւոր եղաւ:

Դանիէլ Վարուժան.- Չօհրապ, սպայից կեդրոնին մէջ ձեր հանդիպումներու ժամանակ Թալաաթն ու միւս պատասխանատուները, ռազմաճակատի գործողութիւններու մասին հետդ կը խօսի՞ն: Թէեւ տեղական մամուլը ողորդուած է պատերազմին առնչուող լուրերով, բայց մենք պետական լրատուութեան հաստք ընծայելու չենք: Քիչ առաջ Էրիքան երոպական մամուլի տուեալներուն մասին խօսեցաւ: Անշուշտ այդ տուեալները հաստի պիտի ըլլան, սակայն այդպիսիք մեզի պարբերաբար կը հասնին:

(Մինչեւ Չօհրապի պատասխան տալը, Կոմիտաս Վարդապետ ոտքի կը կանգնի եւ ներողութիւն խնդրելով հրաժեշտ տալու ներկաներուն, քանզի պատրիարքարանի դռուր պիտի կղպուէր կէս ժամ յետոյ: Վարդապետին դէպի պատրիարքարան կ'ողողեցի Միամանքօ: Երկուրով կը մեկնին՝ յաջորդ շաբաթ նոյն օրը հանդիպելու համաձայնութեամբ, այս անգամ՝ Չօհրապի

տան մէջ: Ներկաները ոտքի՝ բարի գիշեր կը մաղթեն մեկնողներուն):

Գրիգոր Չօհրապ.- *(Չօհրապ կը շարունակէ ընդհատուած խօսակցութիւնը)* Պարագան նոյնն է: Ինչպէս թուրքական մամուլը, այնպէս ալ իտտիհատի պատասխանատուները սեղմ շրջանակի մէջ կը յայտնեն, այն ինչ, որ իրենք նպատակայարմար կը սեպեն: Սակայն, որչափ ալ զաղտնապահ ըլլան, իրենց առանձին խօսքերէն, ակնարկութիւններէն դժբի միմիկայէն կարելի է ենթադրել այն հարցերու բովանդակութեան մասին, որոնք պետական զաղտնիքներ են: Այսքանը յայտնեմ, որ իրենց բուն մտահոգութիւնը Ռուսաստանն է եւ յոյսեր կապած են ռուսական կայսրութեան ներքին խլրտումներուն հետ: Իմ կարծիքով, Ռուսաստանի տկարացումը ճակատներուն վրայ, մեր ժողովուրդի դատին համար բացասական անդրադարձ կրնայ ունենալ:

(Այս միջոցին տիկին Արաքսի սուրճի եհլրասիրութիւնը կը կատարէ):

Ռուբէն Սեակ.- Չօհրապ, ընկճուած վիճակ ունիս: Բեզ երբէք այս վիճակով տեսած չէի: Սուրճը խմէ, աշխուժացիր: Թէեւ կացութիւնը մտահոգիչ է, սակայն քա՛ջ եղիր:

Էրիքա Չիլինկիրեան.- Հայ քաղաքական մտքին ու պայքարին զուգահեռ յատկապէս՝ Գրիգոր Չօհրապի, Դանիէլ Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբէն Սեակի, գրականութեան եւ հրապարակախօսութեան միջոցով հնչած ահագնագը եթէ իր ժամանակին ու ճիշդ ընկալուէր հայ պահպանողականութեան կողմէ, հաւանաբար կացութեան զարգացումը այլ կերպ կ'ընթանար: Բայց հիմա ա'յս է իրավիճակը, ու յետագայ բոլոր աշխատանքներուն ելակետը ներկայ պահէն պիտի մեկնի:

Արաքսի Չիպուզբեարեան.- Վերջերս կարդացի հայ քաղաքական կուսակցութեան մը՝ Ս.Դ.Հ.Կ.-ի Ամերիկայի շրջանի օրկանին բացառիկ թիւին մէջ երեւցած հրապարակում մը: Այն լոյս տեսած էր 1913-ին եւ կը յայտարարէր, թէ հայ յեղափոխական առաջին քաղաքական կուսակցութիւնը որոշած էր հաշուեյարդարի ենթարկել Թալաաթն ու ընդհանրապէս Իտտիհատի վերնախաւը, որպէս հայ ժողովուրդի սպանող նախա-

պատրաստողներ: Սակայն մատնութեան մը հետեւանքով կուսակցութեան բազմաթիւ գործիչներ այժմ բանտարկուած են, անոնց մահապատիժ կը սպառնայ: Էրիքա, քիչ առաջուայ քու տուած տեղեկութիւնդ ձերբակալուած յեղափոխականներու մասին, ըսածս կը հաստատէ: Մեր տեղեկութիւններն իրար կ'ամբողջացնեն: Կը ցախմ, որ տարիներ առաջ, ընդհանրապէս հայ յեղափոխական շարժումներուն անհրաժեշտ քիկունքը չտուաւ պոլսահայութիւնը:

Ռուբէն Սեւակ.- Ինքնապաշտպանութեան եւ ազատագրական շարժումները հայ իրականութեան մէջ, ինչպէս գրեթէ բոլոր ժողովուրդներու պարագային է, նախ սկսաւ տարերայնօրէն, որպէս դաժան իրաւակարգի դէմ բնագոյական ապստամբութիւն, յետագային միայն ստացաւ տեսական-գաղափարական բովանդակութիւն: Մեր ժողովուրդը սկիզբը գուցէ ամբողջութեամբ պատրաստ չէր: Երբ ցանուած սերմերը սկսած էին նոր-նոր պտուղներ տալ, ահա պայթեցաւ անիծեալ համաշխարհային պատերազմը:

Գրիգոր Չօհրասպ.- Քաղաքականութիւնը բարդ է ու ապերախտ գործ: Մարդ, որքան ալ ինզիմքը բարձր քաղաքագետ դասէ, ունենայ համապատասխան կրթութիւն ու փորձ, ենթայ է սայթաքումներու: Ես, տարիներ շարունակ օսմանեան բռնատիրութեան դէմ պայքարի ուղին նկատեցի հրապարակագրութիւնը, մեծ տէրութիւններու հետ գործակցութիւնը, խորհրդարանի ամբիոնը եւ նման բաներ: Սակայն, մեր ապրած բռնատիրական իրաւակարգի տակ յիշեալները լրացուցիչներ կրնային ըլլալ զենքին, կազմակերպուած ինքնապաշտպանութեան՝ զաւառներէն մինչեւ Պոլիս. այո՛, նոյնիսկ մինչեւ Պոլիս:

Էրիքա Չիլինկիրեան.- Չինեալ յեղափոխութիւնները, կամ ըմբոստութիւնները առնչուած են ու պիտի առնչուին արեան հետ: Այսինքն, առանց արիւն թափելու ժողովուրդներու ազատութեան ու արդարութեան հասնիլ անհնար է: Եւ հայ իրականութեան մէջ գործող յեղափոխական շարժումները ճիշդ ուղիի վրայ են. զենքն է որ կը խօսի, իսկ արեան տուրքէն խուսափիլ անհնար է, այդ մասին արդէն նախապէս անդրադարձած էի:

Սակայն, ինչպէս Ռուբէնը ըսաւ, համաշխարհային պատերազմը եւ ժամանակները կը գործեն հայ ժողովուրդի դէմ:

Ռուբէն Մեաակ.- Ես պիտի աւելցնեմ նաեւ, որ հայ պահպանողականութեան դէմ յատուկ դիրքորոշումը շատ կարեւոր է: Այդպիսիք ազատագրական շարժումները իրենց թիկունքէն կը դաշինահարէն: Բիչ առաջ, ակնարկութիւն եղաւ մատնութեամբ մը հայ յեղափոխականներու ձերբակալման մասին: Մատնիչ-դաւաճաններ գոյութիւն ունին մեր իրականութեան մէջ: Արմատախիլ պիտի ընենք զանոնք ամէն գնով: Դաւաճանները բուն թշնամիին չափ վտանգաւոր են:

Դանիէլ Վարուժան.- Ես հարիւր տոկոսով համաձայն եմ հետոյ, Ռուբէն: Մայրս, ինչպէս նաեւ երկու եղբայրներս՝ Պետրոս եւ Արշակ մատնութեամբ մը արքայութեան: Մէկ տարի յետոյ, հին ծանօթ մը, որը նոյնպէս արքայական եղած էր, բայց ազատած էր հրաշքով, տեղեակ եղայ, թէ անոնք Տէր Զօրի ճանապարհին չդիմանալով ջարդարարներու տանջանքներուն, մահացած են կլիզիչ արեւուն տակ:

Գրիգոր Զօհրապ.- Դանիէլ, «Զարդը» խորագրուած բանաստեղծութիւնը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ: Վահրամ Փափազեան անվախօրէն կ'արտասանէ այդ գործը՝ Գահիրէի, Ադերասանդրիոյ եւ նոյնիսկ Պոլոյ բեմերուն վրայ: Չեմ կրնան չհիանալ «Հացին Երզը» տաղերգութեամբը: Այդ գործը բնութեան հետ կապուած երաժշտութիւն է կարծես, ինչպէս նաեւ հայն մշակի սրտի բարախումը:

Արաքսի Չիպուզեարեան.- Ամուսինս «Զարդը» բանաստեղծութիւնը գրեց հոգեկան մեծ տառապանքէ մը յետոյ: Սօր եւ երկու եղբայրներուն արքայի լուրը ծանր ազդած էր իր վրան: Թէեւ անոնց ողջ մնացած ըլլալու մասին յոյս չունէր, սակայն մեծ ցնցում ունեցաւ, երբ լսեց հարսզատներու նահատակութեան մանրամասնութիւնները: Աւելի քան մէկ շաբաթ չկրցաւ քնանալ: «Զարդը» գործը այդ տառապանքին արտայատուցութիւնն է:

Դանիէլ Վարուժան.- Ճիշդ է Արաքսիին ըսածը՝ «Զարդը» բանաստեղծութիւնը մօրս եւ երկու եղբայրներուս նահատակութեան Epicedium-ը՝ այսինքն մահերգն է, բայց միեւնոյն ժամա-

նակ մահերգն է բոլոր այն հայորդիներուն, որոնք տարիներ է վեր կը նահատակուին օսմանցիի ատելի լուծին տակ:

Գրիգոր Զօհրասյ.- Իմ վրաս մեծ տպատրուփին ձգած է նաև «Մեռակի Թրուպատուրները» երկարաշունչ բանաստեղծութիւնը: Ռուբէն (*դիմելով Մեռակին*), քնարական հերոսիդ նպատակակետը ի՞նչ է յիշեալ գործին մէջ: Ես իմ պատկերացումը ունիմ, սակայն կ'ուզեմ լսել հեղինակին կարծիքը:

Ռուբէն Մեռակ.- Թրուպատուրները, ինչպէս ծանօթ է, միջնադարեան Երոսայի թափառող երաժիշտ-երգիչներն էին: Անոնք՝ կեանքի սովորական, կամ ընդունուած ձևերով ապրելակերպէն հրաժարած մարդիկ էին՝ անցնելով երկրէ-երկիր, քաղաքէ-քաղաք իրենց ժողովրդական արուեստով ու կնդիրներուն մօտ կ'արթնցնէին ճշմարտութեան, արդարութեան, ազնիւի ու զեղեցիկի գաղափարները: Իմ թրուպատուրներս ինքնանուիրումով, կեանքի սովորական կամ փարթամ վայելքներէն հրաժարելով, արդարութեան եւ ճշմարտութեան հետամուտ են: Դեռ ատելին, անոնց երգերը չարին դէմ ընթոստանալու մարտակոչեր են:

Էրիքա Չիլինկիրեան.- Պարոն Զօհրասյ, Ռուբէնը թեւ մասնագիտութեամբ բժիշկ է, սակայն վերջին շրջանին դարձած է թրուպատուր-բժիշկ: Ճշմարտութիւններու, ազնուութեան եւ արդարութեան մասին փոքր դասախօսութիւններ կուտայ իր հիւանդներուն: Ինչ որ գրած է թուղթի վրայ, կեանքի մէջ գործնականի կը վերածէ:

Գրիգոր Զօհրասյ.- Իմ ընկալումը ուրեմն, բանաստեղծութեանդ կապակցութեամբ ճիշդ էր, սիրելի Ռուբէն: «Թրուպատուր» ներուն մասին յօդուածիս մէջ, որ շուտով պիտի պատրաստեմ, տեսակէտս պիտի համապատասխանէ հեղինակի մտաստեւորումին հետ:

Արաքսի Չիպուզբեարեան.- Ռուբէն Մեռակի «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր» արձակ ստեղծագործութիւնը եւ զեղազիտական հաճոյք կը պատճառէ ընթերցողին, ինչպէս նաև գործնական խորհրդատու է: Ինձ ցնցեց այն փաստագրական պատմուածքը, որ կը վերաբերի ապօրինի կենակցութեան մը իբր հետեւանք ծնող անմեղ մանուկի սպանութիւնը մօր կողմէ: Յու-

գիչ այս գործին մէջ, պարոն Սեւակ, դուք մարդ արարածին, որ ծնած է որեւէ պայմանի բերումով, թէկուզ ապօրինի կենակցութեան իբր արդիւնք, ապրելու իրաւունքը կը պաշտպանէք: Եւ ճիշդ է, ես ալ որպէս ընթերցող կը հաստատեմ թէ՛ մարդ էակը եթէ ծնի, ապրելու կատարեալ իրաւունք ունի, մարդասպանութիւնը մեծագոյն մեղքերէն մէկն, նաեւ յանցագործութիւն՝ պետական օրէնքներով:

Դանիէլ Վարուժան.- Գաւառի մեր ժողովուրդին շատ ատելի լոյս ու գիտութիւն պիտի հաղորդենք: Կը միանամ Արաքսիի տեսակետին: Սեւակի «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր» գործը շատ կարեւոր միջոց է գաւառի մեր ազգակիցները լուսաւորելու: Լուսաւորեալ մարդը ոչ միայն իր առօրեայ կեանքը ճիշդ ու հիմնատր կը դասաւորէ՝ առողջապահութենէն մինչեւ բարոյական սկզբունքներ, նաեւ կրնայ ինքնապաշտպանուիլ, երբ բռնութիւնը հասնի իրեն: Արթուն եւ գիտելիքներով զարգացած մարդը, հեշտ ու խաղաղ անձնատուր չըլլար եղեռնագործին:

Գրիգոր Չօօրասյ.- Սեւակը մեր գրականութեան պայծառ յոյսն է: Ես իր մէջ կը տեսնեմ ոչ միայն ամբողջական գրողը, ստեղծագործողը, նաեւ Մարդը, Մարդը՝ զլխագիրով: Բանաստեղծի բնատուր տաղանդ, խիզախութիւն, նուիրում ահա այն ստորագելիները, որ ես կը տեսնեմ Սեւակին մէջ: Այս խօսքերը, ոչ թէ քեզ հաճոյախօսելու համար կ'ըսեմ, սիրելի Ռուբէն, այլ՝ կ'ընդգծեմ ճշմարտութիւնը:

Էրիքա Չիլինկիրեան.- Այն յատկանիշները, որոնք դուք գտաք Ռուբէնի անձին մէջ պարոն Չօօրասյ, իմ կողմէս կ'եկկորդեն: Իմ ծանօթութեան առաջին շաբաթներու ընթացքին իսկ, Պոլսէն Ջովիցերիա հասած այս երիտասարդին մէջ ես գտայ իտէալներու Մարդը եւ կեանքս կապեցի անոր. որուն համար երջանիկ եմ: Այս օրերուն, կը զգամ, թէ իմ կատարեալ սիրոյ առակայ Մարդը վտանգուած է, սպառնալիքներու տակ կը գտնուի, ես այդ կը զգամ. վտանգը ուրուականի մման կը շրջի մեր շուրջ, սակայն ես կը սիրեմ ու յաւէտ պիտի սիրեմ Ռուբէնը. *(ընթշօռէն կը համբուրէ իր ամուսինը)*.

Գրիգոր Չօօրասյ.- Էրիքա, ուրախ եմ եւ հպարտ որ քեզ նման հարս մը ունինք, երտպացի՝ իր հայեացքներով, հայ՝ իր մտա-

հոգութիւններով: Յաւետ երջանիկ եղիր քու Ռուբէնով: Աստուած երկար կեանք պարգեւէ ձեզի:

(Նման ջերմ մաղթանքներ կը կատարեն նաեւ Դանիէլ Վարուժանը եւ Արաքսի Չիպուզբեարեանը)

Ռուբէն Սեւակ.- Սիրելի հիւրընկալներ, ժամանակը արդէն բաւական յառաջացած է. թոյլ տուէք, որ մեկնինք: Շատ հաճելի եւ մանաւանդ օգտակար երեկոյ մըն էր որ անցուցինք:

Գրիգոր Զօհրապ.- *(Ոտքի ելլելով)* Ես ալ պէտք է մեկնիմ տուն: Միայն յայտնեմ, թէ շատոնց կը սպասէի այսպիսի հանդիպման: Անշուշտ լաւն այն է, որ որոշեցինք նման հանդիպումները կանոնաւոր հերթականութեան վերածել: Մի մոռնաք, զալ շաբաթ այս օրը հանդիպումը մեր տան մէջ է: Երուխանին եւ Զարդարեանին ալ լուր կուտամ ես: Իսկ դուն, Դանիէլ, Հայր Սուրբն ու Սիմամանթօս տեղեակ պահէ: *(Գրիգոր Զօհրապ, Ռուբէն Սեւակ եւ Էրիքա Չիլինկիրեան դուրս կուգան):*

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(Առաջին եւ երկրորդ պատմողները բեմին վրայ են)

Առաջին Պատմող (Յասմիկ).- Համաշխարհային պատերազմը կը շարունակէ մոլեգնիլ: Արեւմտեան Հայաստանի գաւառներէն կարմիր լուրեր կը հասնին Պոլիս եւ այլ վայրեր: Աքսորի կարաւանները խումբ-խումբ կը քալեն ձիւնապատ լեռներու ստորոտներէն, հասնելու համար կիզիչ անապատներ:

Երկրորդ Պատմող (Համասսփիւռ).- Կոտորած: Եղեռն: Յեղասպանութիւն՝ քաղաքակիրթ մարդկութեան աչքերուն առջեւ: Իտտիհատի գորշ գայլերը որոշած են վերջ տալ Հայկական Հարցին՝ վերացնելով հայ ժողովուրդը:

Առաջին Պատմող (Յասմիկ).- Թէեւ Հայ Ազգային Ազատագրական շարժումները կը հարուածեն թշնամիին, սակայն ուժերն անհաւասար են: Լուրեր կը հասնին Եփրատի ափերէն, թէ պատմական գեղը հայոց դիակներով լեցուած է: Արի՛ւն, արի՛ւն եւ արի՛ւն արցունք: Հին փառք ու մշակոյթ ունեցող ժողովուրդ մը կը մեռնի:

Երկրորդ Պատմող (Համասփիւռ) Բոցերու մէջ է Վանը՝ Վանի Այգեստանը, աւերակ է արդէն Կարսը, Սասունը աւազակներու ձիերու սմբակներուն տակ կը քանդուի ու կը կողոպտուի, Ձէյթունի իշխանական բնակարանները ցեղայետերու հարեմներու է վերածուած, մեր սրբավայրերն ու եկեղեցիները կը պղծուին.-Միամանքօն տառապանքի մէջ է կրկին՝

Կոտորա՛ծ, Կոտորա՛ծ, Կոտորա՛ծ...

Քաղաքներուն մէջ եւ քաղաքներէն դո՛ւրս

Եւ բարբարոսներն արիւնով կը դառնան,

Սեռոելներուն եւ ոգեվարներուն վրայէն,

Արիւնոտ բերանով ու գիւնովի քրքիչներով...

Յամաքահով մը կիսամեռները զայրոյթով կը խեղդէ:

Ու պառաւներու անձայն կարաւաններ,

Շտապով կը փախչին լայն ճամբաներէն...:

Աւա՛ղ, ապարանքի մը պէս էիր եւ շքեղ
Ու ես՝ երդիքներուս սպիտակ կատարէն,
Աստղածորան գիշերներու յոյսին հետ,
Վարէն, ահեղավազ Եփրատին կ'ունկնդրէի...

Հայրենի՛ տուն, հաւատա՛յ որ մահէս յետոյ
Քու ստերակներուդ սեւին վրայ, իմ հոգիս,
Պիտի գայ, որպէս տատրակ մը տարագիր,
Իր դժբախտ երգն եւ արցունքը լալու...

Առաջին Պատմող (Յասմիկ).- Երբեմն-երբեմն լեռներու ծերպե-
րէն, քարայրներէն, երբեմն մաւել գետնին տակէն կը յայտնուին
վրիժառու բազուկները: Չկայ աւելի դիւժազնական պատկեր,
քան վրիժառուի զէնքին փայլատակումն ու ցեղասպան մար-
դակերայ բորենիներու սատակումը: Սիւմանթօն է ահա նորէն
կը խօսի՝

Ու անոնք, հսկայածեւ ռահվիրաները մարմարեղէն Յոյսին,
Ըմբոստացումներու ապառաժներէն իրենց ճակատներն
արիւնսած,
Բայց աշուերնին անասելի արհաւիրք մը արձակելով
Ու իրենց վշրող ակոսներուն տակ հրաշէկ դաշոյններ
տրորելէն:

* * *

Չայնը դողդոջ էր, սիրտը սիրով լեցուն, ոտուիները
մոխրապատ
Եւ ինք գաղափարէն գեղեցիկ՝
Նայուածքներէն եւ արցունք կը հոսեր, եւ կայծեր
կ'արձակուէին
Եւ շքեղօրէն Յեղին հոգին էր...

Երկրորդ Պատմող (Համասփիւռ).- Սիւմանթօն պայքարի եր-
գիչն է: մաւել՝

-Քաղաքահին մուտքն այս առաւօտ պէտք է բանալ,
Պատուարներն ու պատնէշներն յե՛տ շոջելով,
Պէտք է բոլոր սգաւորներն, այրիներն ու որբորն
արտասուաթոր,
Սեր սէրերուն եւ սուրերուն ապաստանին...:
Պէտք է քալել դեռ գիւղէ-գիւղ, փլատակէ փլատակ.
Ու եղբայրական ձեռքերով՝ ժպիտներով յուսատու,
Ի մի խմբել անօգնական գիղացիներն ցաւակոծ:
Կռուի կոչել եւ հաւատքի մը զօրութեամբը զրահել զանոնք,
Կեանքը սիրել արդէն, յաղթանակին միակ քայլն է:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ԲԵՍԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ՊՈԼՍՈՅ ՕՍՍԱՆԵԱՆ
ԲԱՆԱԿԻ ՍՊԱՅԻՅ ԱԿՈՒՄԲԻ ԹԱԼԱԱԹԻՆ
ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ ՍԵՆԵԱԿԸ

(ԹԱԼԱԱԹ, ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ, ԱՊԱ՝ ԾԵՆԿԻՉ)

Թալաաթ.- Գրիգոր էֆենտի, երեք շաբաթ անցաւ մեր նախորդ հանդիպումէն: Կը յուսամ առողջութիւնդ քեզ չանհանգստացնէր: Կամ, արդօ՞ք դատական գործերով ծանրաբեռնուած ես, թէ այդ գծով դժուարութիւններ ունիս: Եթէ օգնելու հարց կայ, յիշեցուր: Այդ ողորմելի դատատրները առիթ կը փնտռեն ծառայելու ինձի:

Գրիգոր Զօհրապ.- Ծանրաբեռնուածութիւն միշտ ալ կայ, փաշա, սակայն մասնագիտութեանս առնչուող ծանր բեռերու տոկացած եմ: Դժուարութիւնները դատատրներու, կամ դատախազութեան հետ կը լուծուին օրէնքի սահմաններուն մէջ: Միայն յայտնեմ, որ տրամադրութիւնս տեղը չէ, տունէն շատ դուրս չեմ գար:

Թալաաթ.- Յամենայնդէպս, լուր մը ուղարկէիր: Կեդրոն կուգամ, երբեմն միմակս կը նստիմ ու թերթ կը կարդամ: Այստեղ խելքը գլուխը մէկը չիկայ, որ հետը գրուցեմ:

Գրիգոր Զօհրապ.- Իսկ ո՞ր են էնվեր եւ Դեմալ փաշաները: Անոնք քու ե՛ր մտերիմներն են ե՛ր վստահելի գործակիցները:

Թալաաթ.- Դեմալ Փաշան Հալէպ մեկնեցաւ երկու շաբաթ առաջ: Էնվերը սահմանային շրջաններ ստուգողական շրջագայութեան ելաւ: Միմակ եմ, աշխատաբները խիստ ծանր: Շատ կը յոգնիմ: Այստեղ՝ կեդրոն կուգամ քիչ մը գրուցելու ու հանգստանալու համար: Սակայն, ինչպէս նկատել տուի, քանի մը շաբաթ է գրեթէ գրուցակից չունիմ:

Գրիգոր Զօհրապ.- Փաշա, օր մը ըսիր թէ արտասահման գտնուած տարիներուդ, որպէս քաղաքական տարագիր, տարուած էիր ընթերցանութեամբ: Քեզ շատ հետաքրքրած էին ֆրանսական յեղափոխութեան մասին ստեղծուած գրականու-

քիւնը: Ազատ ժամերուդ շարունակէ կարդալ: Գիրքը մեր լաւագոյն քարեկամն է:

Թալաաթ.- Ինձ համար այլեւս Իստանպուլը Փարիզի նման չէ: Գիրքեր կարդալու ժամանակ չունիմ: Կարդացածներս, ստիպողաբար, օրուան կարեւոր թերթերն են, շրջաններէն եկող տեղեկագիրները եւ սահմանամերձ շրջաններ գտնուող զինուորներու ընտանիքներէն ինձի հասցէագրուած նամակները: Ամէն օր հագար ու մէկ խնդրանք կը ներկայացնեն անոնք: Մնացեալ ժամերս կը կլանեն կառավարութեան գործերը որոնք, նաև, որպէս մեծ վեզիր կ'աշխատիմ կատարել խղճամիտօրէն, ծառայելով հայրենիքիս:

Գրիգոր Զօհրապ.- Պատերազմական գործողութիւններու մասին լրագիրները բաւարար տեղեկութիւններ կը հաղորդէն: Սակայն, ներքին կացութեան, սահմանամերձ շրջաններու եւ գաւառի կացութեան մասին տեղեկութիւններու հազիւ թէ կը հանդիպիմ, որոնք միշտ կարճ ու կտրուկ են:

Թալաաթ.- Կարելոյը մեր պետութեան սահմաններուն ապահովութիւնն է: Ներսը կական մտահոգութիւններ չկան: Մտահոգութիւն կը ծագի, եթէ Գերմանիան ու իր դաշնակիցները մեղի մատնուին կամ ճակատներու վրայ նահանջներ ունենան: Առ այժմ մտահոգուելու պատճառ չունիմ: Փառք Ալլահին, ամէն բան կ'ընթանայ ըստ նախատեսութեան:

Գրիգոր Զօհրապ.- Քիչ առաջ ըսիք, թէ սահմանային գօտիներ գտնուող զինուորներու ընտանիքներէն բազմաթիւ նամակներ կը ստանաս, անոնք շարունակ խնդրանքներ, գուցէ եւ պահանջներ կը ներկայացնեն, միթէ՞ այդքանն ալ մտահոգութիւն չէ: Գաղտիք չէ, որ երկրի տարբեր շրջաններէն ներս սուլի եւ համաճարակի սպառնալիք կը տիրէ: Պատերազմը իր արեւները կը գործէ աշխարհի չորս կողմերը: Պիտի խուսափէինք պատերազմէն:

Թալաաթ.- Պատերազմը այո, չարիք է, սակայն պարագաներ կան, որմէ ոչ միայն պիտի շխուսափինք, եթէ նոյնիսկ այդ պատերազմն է: Տեղի ունեցող պատերազմով մենք քանի մը հարցեր ունինք մեր առջեւ եւ պիտի լուծե՛նք անպայման:

Գրիգոր Զօհրապ.- Փաշա, անցեալին դուն ինձի հետ խորհրդակցած ես ձեր քաղաքական ասպարեզի ամենաբարդ հարցերը լուծելու ժամանակ: Ապտիլ Համիտի դէմ մղուող պայքարի փտանգաւոր տարիներուն ես ձեր բոլորին խորհրդականն էի. իսկ այսօր ի՞նչ պատահեցաւ, որ յիշուած «քանի մը կարետր հարցերէն» եւ անոնց լուծումին հետ կապուած ծրագիրներէն լար չունիմ: Միթէ՞ արդէն անվստահելի եմ:

Թալաաթ.- Ոչ Զօհրապ *էփենտի*, դուն կը մնաս իմ բարեկամը: Քիչ առաջ ալ ըսի, թէ սպայից կեդրոն որ գամ, քեզի կը նախընտրեմ որպէս գրուցակից:

Գրիգոր Զօհրապ.- Սակայն անցեալին խորհրդակից էի, իսկ հիմա գրուցակից կը սեպուիմ: Բան մը փոխուած է, այդ ալ շատ կարետր բան. փաշա՛:

Թալաաթ.- Մենք հին բարեկամներ ենք: Բայց պիտի գիտակցինք նաեւ, որ նորագոյն պայմանները քաղաքական կեանքի մէջ կրնան անկիւնադարձային ըլլալ:

Գրիգոր Զօհրապ.- Աեւի պարզ ու թափանցիկ խօսիր, եթէ հնարաւոր է:

Թալաաթ.- Պատերազմ է եւ համաշխարհայի՛ն պատերազմ:

Գրիգոր Զօհրապ.- Այդ մասին բոլորս ալ գիտենք: Կը սպասեմ, որ յստակացնես միտքդ:

Թալաաթ.- Եթէ շատ կը հետաքրքրէ քեզի, խօսիմ նախ անձի՛դ վերաբերադ հարցի մասին:

Գրիգոր Զօհրապ.- Զգալի էր, որ անձիս վերաբերող հարցեր կան: Այդքան քաղաքական հոտառութիւն ունիմ: Աւելցնեմ նաեւ, որ հարցը որուն մասին ակնարկեցիք, կ'առնչուի նաեւ ուրիշներու, այսինքն՝ ուրիշ հայերու:

Թալաաթ.- Զօհրապ, չեմ ուզեր, որ ըսածներուս ուրբերգութեան երանգ տաս: Ինչ որ ալ պատահի, ինչ պարագաներ ալ ստեղծուին, ես կը մնամ քարեկամդ: Իսկ Թալաաթը իր բարեկամները պաշտպանելու շափ հեղինակութիւն ունի:

Գրիգոր Զօհրապ.- Վերադառնանք անձիս վերաբերող հարցին: Կ'ուզեմ որ մանրամասնես ակնարկութիւնդ: Եթէ բարեկամ ես, առնուազն խօսիր: Պաշտպանելդ երկրորդական է:

Թալաաթ.- Քիչ մը համբերե՛, սուրճ մը խմենք, յետոյ կը խօսինք:

Գրիգոր Չօհրապ.- Սուրճը անլի ուշ կը խմենք: Բայց չկարծես թէ կը վախճանամ, կամ խուճապի մատնուած եմ: Պարզապէս հետաքրքրական է անձիս շուրջ դարձող պատմութեան տեղեակ ըլլալ: Յետոյ Աստուած մեծ է: Ուրեմն հարցը այնպիսի՞ն է, որ Թալաաթ փաշայի պաշտպանութեան կարիքը պիտի զգամ:

Թալաաթ.- Ի՞նչու, պատիւ չէ՞ քեզի համար պաշտպանութեանս տակ մտնելը:

Գրիգոր Չօհրապ.- Կը ներես, եթէ խնդիրը հասած է մինչեւ անձիս անվատահեղի օսմանեան քաղաքացի ըլլալուն կամ ոչ, ինձ այլեւս ոչինչ կը հետաքրքրէ:

Թալաաթ.- Գրիգոր *էֆէնտի*, մի յուզուիր: Թիկունքդ Թալաաթն է:

Գրիգոր Չօհրապ.- Մեր երկխօսութիւնը երկարեցաւ: Կը կրկնեմ, եթէ բարեկամ ես, բուն ըսուելիքը հաճիս ըսէ:

Թալաաթ.- Պիտի խօսիմ, վերջապէս ես ալ կուզեմ հարցերը պարզել:

Գրիգոր Չօհրապ.- Եթէ խօսիս, համբերութեամբ կը լսեմ:

Թալաաթ.- Պատերազմը սկսելէն անմիջապէս յետոյ, Իտտի-հատի գլխաւոր վարչութեան հրահանգով հայ մտաւորականութեան թղթածրարի մանրակրկիտ ուսումնասիրութեան սկսան պետութեան յատուկ սպասարկութիւնները: Գրիգոր *էֆէնտի*, քու մասին խիստ բացասական տեղեկագիր պատրաստուած էւ յղուած է առ որ անկ է:

Գրիգոր Չօհրապ.- Ի՞նչ հիմքեր ունի այդ տեղեկագիրը գիս օսմանեան տէրութեան կասկածելի ներկայացնելու:

Թալաաթ.- (*Քիչ մը ծայնը բարձրացնելով դէպի դուռը*) Ճենկիզ, հաճիս ներս եկուր: (*Թալաաթի համհարզ ճենկիզ ներս կը մտնէ ու կը բարեւ նստողները*): (*Դիմելով ճենկիզին*) Դուն Ստանպուլի հայ մտաւորականութեան թղթածրարին ծանօթ ես: Գիտես, թէ Գրիգոր *էֆէնտի* մասին խիստ բացասական տեղեկագիր կայ: Հիմա իրեն ըսէ այն հիմնականը, որուն մէջ կը մեղադրուի: Ես չեմ ուզեր զինք էսպէս հետաքրքրող հարցը գալտի պաել:

Ճենկիզ.- Փաշաս, ձեր հարցին պատասխանը հետեւեալն է. նախ յայտնեն, ձեր հրամանին համաձայն եւ ձեր անունով ուզեցի Չօհրապ էֆէնտիի քրթածրարը (*պայտասկէն կը հանէ քրթածրար մը ու ստեպ-ստեպ նայելով կը խօսի*), որուն բովանդակութիւնը հետեւեալն է՝ Գրիգոր Չօհրապ, հօրը անունը Խաչիկ, ծնած է 1861-ին Պոլիս, ազգութիւնը հայ: Մասնագիտութեամբ իրաւաբան է, ունի նաեւ երկրաչափի կրթութիւն: Եղած է հասարակական-քաղաքական նշանատը գործիչ: Համագործակցած է Իտտիհատ վէ թերաքքը կուսակցութեան հետ Սուլթան Ապտիլ Համիտը տապալելու գործով: Յետագային ընտրուած է օսմանեան խորհրդարանի անդամ: Թէեւ օսմանեան քաղաքացի, սակայն շատ աւելիով հայ ազգայնական է: Որպէս փաստաբան հետեւողականօրէն պաշտպանած է հայ քաղաքական բանտարկեալներուն դատերը: 1905-ին Իշթիպի զայմագամը խոշտանգած էր պուկար քաղաքական գործիչ-յեղափոխական մը. դատարարութեան ընթացքին Չօհրապ յեղափոխականին դատը պաշտպանած է սիրայօժար, որուն հետեւանքով ալ սուլթանի արդարութեան նախարարին կողմէ անոր արգիլուցեալ փաստաբանութեամբ պարապիլ: 1909-ին Ատանայի մէջ հայերու եւ օսմանեան ապահովութեան ուժերու միջեւ կատարուած դէպքերուն առիթով, Չօհրապ, Ատանայի կոտորածներ ամբաստանութեամբ, օտար պետութիւններու դեսպանատուններու մօտ բողոքներու կազմակերպիչը եղած էր, նուաստացնելով Թուրքիան: Ընդհանուր ապահովութեան սպասարկութիւնը զինք կասկածելի, անյուսալի, նոյնիսկ վտանագատը կը նկատէ:

Թալաթ.- Գրիգոր *էֆէնտի*, ահա այսպիսի՝ մեղադրանքներ քեզի կասկածելի կը դարձնեն: Այն ինչ, որ անձիդ մասին պատրաստուած է որպէս ընդհանուր ապահովութեան տեղեկագիր, միայն մեր օրերուն չառնչուիր, այլ՝ նախկին տարիներու մեղադրանքներուն շարունակութիւնն է, գուցէ վերահաստատունը:

Գրիգոր Չօհրապ.- Այն բոլոր մեղադրանքները, որոնք յիշատակուած էին, անշուշտ եթէ անոնք իսկապէս մեղադրանքներ են, չեմ ժխտեր: Նախ յայտնեն, որ ես փաստաբան եմ, բոլորդ

գիտէք: Դատարանէն ներս, օրէնքի սահմաններուն մէջ պաշտպանած են ու պիտի պաշտպանեն ինծի դիմողները: Հասարակական գործիչը, կամ երեսփոխանը պարատաւոր է նաեւ երկրին մէջ տիրող սխալները, մոլորութիւնները մատնանշել եւ բարեկարգում պահանջել: Ուրիշ մատնանշում մը ունիմ. այդ տեղեկագրին մէջ աննշան ակնարկութիւն կայ իմ եւ Իտալիա տի գործակցութեան մասին: Այտիւլ Համիտի տապալման գործընթացին մէջ, թէկուզ համեստ, բայց ես իմ լուծման ունիմ: Այս մասին, փաշա, դուն բոլորէն աւելի գիտես: Եւ ուրկէ՞ կուգայ մեր բարեկամութիւնը, եթէ ոչ յիշեալ գործակցութենէն: Ձեր զաղտնի ծառայութիւններուն ունեցած տեղեկութիւնները թերի են: Իսկ այդ մասին լռելը առնուազն բարեկամական չէ...:

Ճենկիզ.- Փաշա, պիտի աւելցնեմ, որ ուրիշ մեղադրանքներ ես կան: Այդ մասին չուզեցի անդրադառնալ, որպէսզի շատ մանրամասնութիւններու մէջ չմտնեմ:

Թալաաթ.- Այդ մասին ե՛ս երկու խօսք պիտի ըսեմ: Բոլոր հարցերուն մօտիկէն տեղեակ են: Գրիգոր *էֆենտի*. Թուրքիոյ սահմաններէն ներս եւ այդ սահմաններէն դուրս, մեր երկրին դէմ խումբեր, որոնք իրենք զիրենք կուսակցութիւն կը կոչեն, քանդիչ գործունէութիւնը կը շարունակեն: Վերջին շրջանին մեզի հասած տեղեկութիւններուն համաձայն, դուք այդ տարրերուն հետ կապեր ունիք: Այդպիսի յեղափոխական կոչուած յանցագործներուն ալ պաշտպանութիւնը առնելու պատրաստ էք արդեօք:

Ճենկիզ.- Ընդհանուր ապահովութեան լուրեր հասած են, որ Իստանպուլի մէջ ձերբակալուած քսան յեղափոխական մեղադրեալներուն պաշտպանութեան համար, Գրիգոր Չօհրայ զաղտնի խորհուրդներ կուտայ անոնց ընտանեկան պարագաներուն:

Գրիգոր Չօհրայ.- Այսքանէն յետոյ, դեռ կարելի է յսուկեալ մեղադրանքներ բարդել անձիս վրայ: Լեզուն ոսկոր չունի: Ձեր ապահովութեան սպասարկութիւնները գործ կ'ուզեն ցոյց տալ: Ես քսան յեղափոխականներուն, որ դուք ահաբեկիչ կ'ըսէք, հարազատներուն հետ ո՛չ կապ ունեցած են եւ ո՛չ ալ խորհուրդներ տուած են: Սակայն, քանի որ խօսքը բացուեցաւ ըսեմ. եթէ

ինձի որպէս փաստաբան եթէ կանչէին յիշեալ ձերբակալուածներուն դատը պաշտպանելու համար, մեծ սիրով կ'ընդունէի: Այդ մարդոց պատկանած կազմակերպութիւնը արտասահմանի մէջ՝ այսինքն Օսմանեան տէրութեան սահմաններէն դուրս, աւելի ճիշդը՝ Ռումանիա համագումար կայացուցած է: Մատնութեամբ եւ ցարդ չիմնատրուած մեղադրանքով քսան հոգի ձերբակալուած են, բայց ի՞նչու. ո՞վ կրնայ պատասխանել: Անոնցմ է ոչ մէկը յանցանքի վրայ բռնուած է: Հարցաքննութեան ժամանակ ոչ մէկ խոստովանութիւն կատարուած է: Ամբողջ մեղադրանքը կառուցուած է խափէներու սովորական տեղեկագիրներուն վրայ: Իրաւակարգը հալածախտէ կը տառապի: **Ճենկիզ.** Ընդհանուր ապահովութեան մէջ կայ նաեւ այն շօշափելի փաստերը, թէ Թուրքիոյ սահմաններէն ներս գործող երկու զխաւոր քաղաքական խմբաւորումները օտար պետութեան մը, աւելի ճիշդ Ռուսաստանի հետ համագործակցութեան մէջ են: Եւ պատերազմական ներկայ դրութեամբ, այդ համագործակցութիւնը շատ աւելի վտանգաւոր կը դառնայ: Մեզ մեր թիկունքէն կը փորձեն հարուածել:

Թալաաթ. Այո, հարցը իսկապէս կը բարդանայ, երբ օտար պետութեան մը հաշույն գործունէութիւն կը ծաւալեն հայ կազմակերպութիւնները: Այսպիսով կասկածելի կը դառնան ոչ միայն այդ խմբաւորումներուն անդամակցողները, նաեւ Թուրքիոյ հայութիւնը ընդհանրապէս:

Գրիգոր Չօհրապ. Ռուսաստանի հետ համագործակցութեան կիմքերը ո՞ր են: Շատ դիւրին է խօսքով հայ կազմակերպութիւններ, կամ Թուրքիոյ ամբողջ հայութիւնը կասկածի տակ դնել: Դուք նախատրամադրուած եք:

Ճենկիզ. Բացայայտ է. հայ յեղափոխական կազմակերպութիւններու հիմնադիրներն ու *ֆանտիկ* գործիչները ռուսահայեր են: Անոնք քափանցած են Թուրքիոյ սահմաններէն ներս, քանդիչ գործունէութիւն ծաւալելու համար, Ռուսաստանի ցուցմունքներուն համաձայն: Մեր երկրէն ներս տարբեր ազգերու պատկանող ռուսական գործակալներ կը վիտուան եւ անոնց մէկ մասը հայեր են, իսկ բուն ղեկավարները՝ ռուսահայեր:

Թալաաթ.- Գրիգոր Էֆենտի, քանի մը անուններ տամ քեզի. մտածէ եւ եթէ կ'ուզես յետոյ պատասխանէ՝ Հնչակեան *փարթիի* հիմնադիրներէն ու գործիչներէն՝ Աւետիս Նազարբեկեան, անոր կինը՝ Մարօ Նազարբեկեան, Ռուբէն Խանազատ, Մաթթոս Սարգիսեան, որ ծանօթ է Փրամազ անունով, Ստեփան Սապահ-Գիլեան, ո՞ր պետութեան քաղաքացիներն են:

Գրիգոր Զօհրապ.- Տեղեկացած եմ, որ բոլորն ալ ռուսահպատակներ են: Սակայն յայտնեմ, թէ այդ անձնատրութիւններուն հետ անձամբ ծանօթ չեմ, ոչ ալ անուղղակի կապեր ունեցած եմ:

Թալաաթ.- Ի՞նչ քաղաքացիութիւն ունին Դաշնակցութիւն *փարթիի* հիմնադիրները՝ Զրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան եւ Ռոստոմ:

Գրիգոր Զօհրապ.- Ինչպէս նախորդներու պարագային, այդպէս ալ յիշատակուած վերջին երեք անձնատրութիւններուն եւս ծանօթ եմ միայն անուններով: Անոնք, այո, ռուսահպատակներ են: Բայց յիշեցնեմ, թէ Հայկական Հարցը ծնունդ առաւ հայ յեղափոխական կուսակցութիւններու հիմնադրութենէն առաջ: Այդ կուսակցութիւնները կազմակերպուեցան եւ գործի անցան լուծելու համար վերոյիշեալ Հարցը, որ ամբողջ հայութեան մղձաւանջն է: Կը հաստատեմ նաեւ, հայը՝ հայ է, ռուսահայ կամ քրքահայ պայմանական անուանումներ են միայն: Կայ մէկ հայութիւն եւ անբաժան է այդ ամբողջութիւնը: Եւ յետոյ պատմութենէն քեզի ծանօթ պիտի ըլլայ փաշա, որ 1878-ին Սան-Սթեֆանոյի ժողովի ընթացքին, զինադադարի ստորագրման առիթով, ապա Պեռլինի Վեհաժողովի օրակարգին մաս կազմած է Հայկական Հարցը: Ուրեմն օտարներ մեղադրելու փոխարէն քննենք պատմութիւնը, ղյտենք ներքին ճակատը: Ես ուրիշ հաստատում մը պիտի կատարեմ. որպէս փաստաբան մանրակրկիտ ուսումնասիրած եմ հայ երկու կուսակցութիւններու ծրագիրները:

Ճենկիզ.- Այդ մասին նախ ես ըսելիք ունիմ: Հայկական երկու քաղաքական կազմակերպութիւններուն ալ գաղափարախօսութեան միտք բանին օսմանեան կայսրութեան դէմ պայքարիլ ու զայն կործանելն է: Ռուսական կայսրութեան մասին ես ժխտա-

կան տրամադրութիւններ կան իրենց մօտ, բայց միայն ձեռ-
կանօրէն. բուն թիրախը Թուրքիան է: Իսկ վերջին հաշտով՝
անկախ Հայաստան ստեղծելու երազը հայ քաղաքական կազ-
մակերպութիւններու մեծագոյն նպատակը կը հանդիսանայ: Ա-
նոնք այք ունին նաեւ ամբողջ Արեւելեան Թուրքիոյ վրայ՝
Արեւմտեան Հայաստան անուան տակ: Այս մասին մէկ ամիս
առաջ դասախօսութիւններու շարքի մը ներկայ եղայ, որոնք
նախատեսուած էին ընդհանուր ապահովութեան աշխատա-
կիցներուն համար:

Թալաաթ.- Չօհրապ *էֆէնտի*, բու ուսումնասիրած ծրագիրնե-
րուն եւ իմ համհարզի տուած վերջին տեղեկութիւններուն միջեւ
հակասութիւններ կա՞ն, թէ նոյնն բաներն են:

Գրիգոր Չօհրապ.- Կը համարձակիմ ըսելու, որ ձեր սպասար-
կութիւններու տուած տեղեկութիւնները հայ իրականութեան
մասին ընդհանրապէս հիմնաւորուած չեն, կամ տուեալներուն
ելակէտները ճիշդ չեն: Եթէ ըսեմ, թէ հայ կուսակցութիւնները
Թուրքիոյ մէջ շարժումներ չեն կատարեր, ե՛ս ճիշդ չեմ: Սա-
կայն ամէն մէկ երեւոյթ, կացութիւն եւ վիճակ իր ամբողջու-
թեան՝ *քոնթրքսին* մէջ պիտի քննուի:

Թալաաթ.- Իսկ հայ յեղափոխականներու կատարածները այդ
ո՞ր ամբողջութեան, կամ *քոնթրքսին* մէջ կը տեղաւորուին:

Ճենկիզ.- Հայ քաղաքական երկու կազմակերպութիւններն ալ
այս կամ այն չափով ընկերվարութիւն՝ *սոցիալիզմ* կը քարոզեն,
իբրեւ թէ մեր կեանքէն ներս հաւասարութիւն պիտի ստեղծեն:

Հաւասարութիւն տեսութեան եւ ընկերվարութեան գաղափար-
ներու ծայրայեղ տարբերակը շրջանարութեան մէջ են յատկա-
պէս ռուսական կայսրութեան սահմաններէն ներս գործող
կարգ մը կազմակերպութիւններու կողմէ, եւ նոյն տարբերակը
անոնք կը փորձեն արտածել դէպի Թուրքիա:

Թալաաթ.- *Հաւասարութիւն* կոչուածը բազմաթիւ ընկերաբան-
ներ ու բարեկարգիչներ քարոզեցին, բայց անոր բուն տեղը ցոյց
չտուին: Գոյութիւն չունեցողին տեղը ի՞նչպէս ցոյց տային:

Գրիգոր Չօհրապ.- Իտտիխատը իր ամբողջ դեկավարութեամբ՝
ֆրանսական յեղափոխութենէն որդեգրեց ազատութիւն, հաւա-
սարութիւն եւ եղբայրութիւն լոգունգը եւ իր գաղափարախօսու-

թեան դրօշակը դարձուց: Դուն էիր փաշա, ֆրանսացի ժողովուրդին մտածողութենէն քիտղ այդ տեսութեան վրայ պնդողը, որպէզբեկ տուողը Իտտլիատին: Իսկ կիմա ի՞նչպէս կը ծաղրես հաւասարութիւն եզրը՝ այդ վեհ գաղափարը:

Թալլաթ.- Այնպէս կ'երեւի, թէ... պիտի ըսէի նախկին բարեկամս Գրիգոր, բայց ես ինձ գայեցի առ այժմ: Մեր միջեւ ճեղք մը բացուած է. տայ Աստուած որ այդ ճեղքը չխորանայ: (*Այսպէս ղիմեղով ճենկիզին*) դուն անցիր բովի սենեակը եւ կարգի դիր այն թուղթերը, որոնց մասին ցերեկը խօսեցայ քեզի: Երբ աւարտես գործը, վերադարձիր: Ես դեռ խօսելիքներ ունիմ ղիմացս նստող է.Ֆէնտիին: (*Ճենկիզ դուրս կուգայ*):

Գրիգոր Չօհրապ.- Փաշա՛, դուն քիչ առաջ ըսիր, թէ «այդ ո՞ր ամբողջութեան, կամ *բոնթեքսի* մէջ պիտի տեղատրուի» ըսածներս: Պահը հասած է արդէն եւ հիմա պիտի մատնանշեմ այդ ամբողջութիւնը:

Թալլաթ.- Միայն թէ երկար քարոզ չկարդաս: Չըլլայ, թէ դուն ալ միւս ազգակիցներուդ նման նոր գաղափարախօսութեան մը տարածողը դարձար:

Գրիգոր Չօհրապ.- Եթէ ճշմարտութիւններու մասին խօսիմ եւ դուն ըսածներս քեզի համար ոչ ընդունելի գաղափարախօսութեան մը քարոզ նկատես, այդպէս թող ըլլայ: Ես ի՛նչ հասկցած արդարադատութեան բնագաւառին մէջ կազմաւորուեցայ, հետեւաբար իրատունքի, արդարութեան եւ ճշմարտութիւններու մասին խօսելէ պիտի չվախնամ:

Թուրքիայ մէջ տիրող պայմանները՝ սուլթանականէն մինչեւ իտտիական իրաւակարգերը՝ էին ու կը մնան միջնադարեան յետամնացութեան եւ բռնատիրութեան ոլորտին մէջ: Ազգային փորրամասնութիւններու, անոնց կրօնքներուն եւ մշակոյթներուն իրատունքները շարունակ բռնաբարուեցան ու կը բռնաբարուին այս երկրէն ներս: Մասնատրապէս հայերու համար պայմանները եղան ամենադաժանը, անհանդուրժելին: Հսպակի՛ն կը սպասէիք փաշա: Ըմբոստութիւնը պէտք էր պայթեր ու պայթեցաւ: Ի՞նչ կարելոր է, թէ ըմբոստութեան գաղափարախօսութիւնը ուրկէ եւ ինչ միջոցներով եկաւ: Եկաւ, որովհետեւ չէր կրնար չգալ: Եկաւ, որովհետեւ մահուան եւ կեանքի միջեւ

ընտրութիւն պիտի կատարուէր ճշնուածներու կողմէ: Ապրելու միակ ելքը օսմանեան միջավայրին մէջ իրաւագրկուածներուն եւ հալածուածներուն ըմբոստանալն էր:

Թալաթ.- Լա՛ւ, լա՛ւ քիչ մը հանգիստ խօսիր: Մենք կը գտնուինք օսմանեան բանակի սպայից ակումբին, այսինքն սպայից տա՛ն մէջ եւ ոչ թէ սովորական ժամադրավայր մը:

Գրիգոր Չօհրապ.- Ես հանգիստ եմ, սակայն այն միտքերը, որոնք կ'արտայայտեն եւ բառերն ու նախադասութիւնները, որնցմով կը խօսիմ, անո՛նք անհանգիստ են:

Թալաթ.- Երկրէն ներս կրնայ պատահիլ, որ դժուարութիւններ կան: Սահմանամերձ շրջաններէն տեղահանութիւններ կը կատարուին: Պատերազմ է: Դժուարութիւնները օսմանցի իրաքանջիւր քաղաքացիին համար է այս օրերուն: Ի՞նչու միայն հայերուն կը վերագրես եղածները: Դուն քաղաքագէտ մարդ ես եւ ատելի լաւ պիտի ըմբռնես վիճակը:

Գրիգոր Չօհրապ.- Ես, օսմանեան խորհրդարանի անդամ եւ հայ համայնքի առաջնորդներէն մէկն եմ: Սախալուծ եմ նոյնիսկ հրապարակաւ շատ ատելի բուն խօսիլ Թուրքիոյ հայութեան հանդէպ ծրագրուած վտանգատը քաղաքականութեան մասին: Փաշա, պիտի ըսեմ նաեւ, որ այն ինչ որ կը կատարուի մեր օրերուն՝ մասնաւորապէս հայերու դէմ, քու նախարարութեան ձեռքբերումն գործն է: Կը ցաւիմ: Մեզ՝ այսինքն Թուրքիոյ ամբողջ հայութիւնը անխտիր ռուսական գործակալ որակելը, կանխամտածուած վտանգատը ծրագրի բուն նպատակը վարագորելու կը ծառայէ:

Թալաթ.- Գրիգոր՛ր կը քաւէ, մենք պետութիւն ենք եւ մեզի հետ կատակ չըլլար: Զեզի խորհուրդ կուտամ՝ դուն սա իրաւունք, հաւասարութիւն, ազգ, մշակոյթ, կրօնք եւ նման բաներ շահագործելէ հեռու մնայ: Չեմ ուզեր որ անձամբ վտանգուիս: Կը կրկնեմ խորհուրդս՝ այս օրերուն այդ խելածնոր հոսանքին գոհ մի դառնար: Խելքդ գլուխդ հաւաքէ: Պայմաններն ու կացութիւնը պատկերացուցածէդ շատ ատելի բարդ են: Կրկին կ'ըսեմ՝ խելքդ գլուխդ հաւաքէ, մեղք ես:

Գրիգոր Չօհրապ.- Այսինքն ի՞նչ ընեմ, «խելքդ գլուխդ հաւաքէ» նախադասութեան տակ ի՞նչ հասկնամ:

Թալաաթ.- Եթէ իմաստուն մարդ ես, համագործակցէ պետութեանդ հետ: Դուն օսմանեան խորհրդարանի անդամ ես: Անցեալին համագործակցեցար Իտտիհատի հետ ընդդէմ սուլթանի: Իսկ այսօր ալ մեզի հետ պէտք է գործակցիս ընդդէմ Թուրքիոյ թշնամիներուն: Այս պատերազմը օր մը իր աւարտին պիտի հասնի յօգուտ Թուրքիոյ: Եթէ լսես խորհուրդներս, երկրի արդարութեան նախարարութեան պաշտօնը արծաթեայ ափսէի վրայ քեզի կուտամ շուտով: Ապտիլ Համիտի իշխանութեան տարիներուն քեզ՝ Գրիգոր Չօհրապիդ արգիլեցին փաստաբանութիւն կատարել, հայ բաղաբալկան գործիչներուն դատերը պաշտպանելու համար. վերջիշէ՛ ե՛ս վերականգնեցի որպէս փաստաբան աշխատելու իրաւունքդ սուլթանի տապալումէն ետք: Եթէ այսօր ասպարէզիդ գրասենեակն ունիս, երեսփոխան ես, ինձի կը պարտիս: Հետեւիր խորհուրդներուս, աւելին կը ստանաս:

Գրիգոր Չօհրապ.- Զիչ առաջ ըսի, թէ ես Թուրքիոյ հայութեան առաջնորդներէն եմ, ինչպէս նաեւ երեսփոխան: Ամէն բանէ առաջ պարտաւոր եմ ազգակիցներուս ապահովութեան մասին մտահոգուելու: Որպէս երեսփոխան պատասխանատու եմ ամբողջ ժողովուրդին առջեւ եւ պարտական եմ, զիս ընտրողներուն: Ոչ որք ողորմութիւն ստացած եմ, եւ այդպիսի բան չեմ ակնկալեր: Ես սկզբունքի մարդ եմ:

Թալաաթ.- Չօհրապ, չէի գիտեր, որ այս աստիճանի յամառ ես: Համբերութիւնն ալ սահմաններ ունի: Բայց տակաւին համբերող եմ:

Գրիգոր Չօհրապ.- Դուն եւ ես քանի անգամ անդրադարձանք իմ երեսփոխանութեան՝ օսմանեան խորհրդարանի անդամ ըլլալու հանգամանքիս: Խորհրդարան՝ *մեճլիս* այս պետութեան սահմանադրութեամբ, կը նշանակէ օրէնսդիր բարձրագոյն մարմին, իսկ այդ մարմնի անդամները ազատ են իրենց կարծիքներ յայտնելու ե՛ր պաշտպանելու այդ կարծիքները: Անոնք միեւնոյն ատեն անձեռնմխելի անձնատրութիւններ են:

Թալաաթ.- Միամիտ ես Չօհրապ: Օսմանեան տէրութեան սահմաններուն մէջ սուլթանէն աւելի հզօր մարդ կա՞ր: Եւ գիտես, թէ ի՞նչ եղաւ անոր ճակատագիրը: Ոչ թէ խորհրդարանի անդամ

մը, այլ ամբողջ խորհրդարանը հաշուեյարդարի կրճամ ենթարկել: Մենք անցեալին խանդավառուած էինք ֆրանսական յեղափոխութեան կոչերով՝ ազատութիւն, եղբայրութիւն եւ հաւասարութիւն: Պարզուեցաւ, որ այդ վերացական գաղափարները թուրիքիոյ համար չեն: Եւ հայ մը, թէկուզ հին բարեկամ, փաստաբան, քաղաքագետ կամ երեսփոխան, դասեր չի կրնար տալ ինձի:

Գրիգոր Զօհրասպ.- Ես ալ քեզի վերյիշեցնեմ, թէ երբ որ ծանօթացայ հետդ, Էտիքնէն նոր՝ Ստանպուլ եկած անփորձ մէկն էիր եւ քեզի բու առաջին անունով կը կոչէի, այսինքն՝ Մէհմետ: Իսկ ես Բիւզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլսոյ մէջ ճանաչուած Խաչիկ Էֆենտիի որդին հանրածանօթ փաստաբան Գրիգոր Զօհրասպն էի, ու այսօր ալ նոյն հեղինակաւոր Զօհրասպն եմ:

Թալաաթ.- Գրիգոր, չէի սպասեր: Սարճնասիրտօրէն՝ Ստանպուլը՝ Կոստանդնուպոլիս վերանուանելդ դաւաճանութիւն կը նկատեմ օսմանեան տէրութեան հանդէպ:

Գրիգոր Զօհրասպ.- Եթէ շարունակես սպառնալ, ամէն գնով պիտի պաշտապնուիմ: Եւ յետոյ Կոստանդնուպոլիսը ծննդավայրիս պատմական անունն է, իմ նախնիներուս արմատները այս հողին մէջն են, այստեղ գահակալած են ժագումով հայ բազմաթիւ կայսրեր: Հետեւաբար ես իսկակա՛ն տանտէր եմ: Բու նախնիդ՝ Ֆաթիհ Սուլթան Մէհմետ հեռուներէն գալով բռնութեամբ տիրակալեց այս կողմերը:

Թալաաթ.- (*Պահ մը կը լռէ, ապա կը շարունակէ խորունկ շունչ քաշելէ յետոյ*) Միւսի Գրիգոր (*հեզմական շեշտաւորումով*), դուն բառերու վարպետ ես, միեւնոյն ատեն սակայն օգտագործած բառերդ կշռելու ատակ չես: Գիտցիր նաեւ, որ ես ոչ թէ միայն Մէհմետ, այլ՝ Մէհմետ Թալաաթ փաշա՛ն եմ, մեծ վեզիր, իմ խօսքս իշխանութեան հաւասար է, ատէլի ճիշդը՝ իշխանութենէն ալ վեր: Ինձմէ կը սարսափին բոլորը, կործբերնին փայլուն շքանշաններով զարդարուած զօրավարներն իսկ: Հայ երկչոտ *քոմիքանձներուն*, կամ այսպէս կոչուած յեղափոխականներ կարծուածներուն, իրաւունք սպահանջողներուն ժամանակն ալ շատ մօտ է: Գրիգոր, չափիդ մէջ մնայ:

Գրիգոր Չօհրապ.- Իմ բառերս կը կշռեն այնքան ժամանակ, երբ դիմացինս իր կշիռքին նժարին վրայ հանգիստ կը մնայ, երկրորդ՝ ես իմ չափիս մէջ կը մնամ այնքան ժամանակ, երբ դիմացինս իր չափերէն դուրս չի գար: Յետոյ աւելցնեն նաեւ, որ երկչոտները *քոմիքաճներ* չեն ըլլար: Իսկ պճնասէր զօրավարներու վարքագծին դո՛ւն ծանօթ ես:

Թալաաթ.- Գրիգոր մենամարտի ելած ես հետս, ապաւինելով մեր հին բարեկամութեան: Հաւանաբար կը մտածես, թէ երբ տեղն ու ժամանակը գայ, դիպուկ չեն կրակեր կուրծքիդ, կը յիշեն անցեալի ծառայութիւններդ: Նաեւ, վերջապէս, նոյն օթեակէն ենք:

Գրիգոր Չօհրապ.- Բայց մենք կը զրուցենք: Եւ մի մոռնար, որ ըստ քու խոստովանութեան, ես ընդունելի զրուցակից եմ քեզի համար: Մենամարտելու, կամ իրար վրայ կրակելու միտումը ես չեմ ունեցած: Ուրկէ՞ հնարեցիր կրակելու պատմութիւնը:

Թալաաթ.- Եթէ ես չկրակեմ, ուրիշը կը կրակէ վրաս:

Գրիգոր Չօհրապ.- Ուրեմն հալածախտի վախն է, այո՛ վախն է պատճառը ազգակիցներուս տեղահանութեան, աքսորին եւ կոտորածին:

Թալաաթ.- Վախկոտ մարդը պատերազմ չի մղեր ե՛ւ ներքին ե՛ւ արտաքին ճակատներուն վրայ:

Գրիգոր Չօհրապ.- Ուրեմն ես ալ իմ եզրակացութիւններս պիտի հանեմ մղուող պատերազմէն:

Թալաաթ.- Հաւանաբար ուշացած ես:

Գրիգոր Չօհրապ.- Ուշացած եմ, բայց ճիշդ իր ժամանակին տեղ՝ այսինքն նպատակիս կը հասնիմ: Այս իրաւակարգը, որուն հաստատման մասնակից եղայ դժբախտաբար, նեխած է այլեւս, ու երկար չիդիմանար:

Թալաաթ.- (*Ժամացոյցին նայելով*) Ես պէտք է մեկնիմ, ուշ է արդէն: Մեկնելէս առաջ համհարզիս հետ քիչ մը պիտի խորհրդակցիմ, վաղուան գործերուս կապակցութեամբ:

Գրիգոր Չօհրապ.- Ես ալ պէտքէ մեկնիմ, առաւօտ շուտ պիտի արթննամ, որ դատարան ներկայանամ, շատ կարեւոր դատ մը պաշտպանելու համար:

Թալաթթ.- Գրիգոր *Էփեճոյի*: Բաւական ծանր խօսքեր փոխանակեցինք իրարու, բայց վնաս չունի: Հին բարեկամներու միջեւ երբեմն անհամաձայնութիւններ երեսան կուգան: Եղածը անցեալ համարէ եւ գործերուդ նայիր: Յայտնեմ, որ յառաջիկայ երկու շաբաթներու ընթացքին շատ զբաղած պիտի ըլլամ: Երբորդ շաբաթուայ մէջ, այսօրը կրկին հանդիպինք գրուցելու:

Գրիգոր Չօհրապ.- Իմ կողմէ արտասանուած խօսքերը բաւական ծանր էին: Հաւանաբար բարձրաձայն պիտի չլիօսէի այդ մասին: Բայց մոռնանք պատահած միջադէպը: (*Չօհրապ հրածեշտ կուտայ Թալաթթին եւ դուրս կուգայ: Պահ մը եաք ներս կը մտնէ ճենկիզ ձեռքին տետրակ մը*):

Ճենկիզ.- Փաշաս, ըստ հրահանգիդ կատարեցի ձերբակալուելիք մարդոց անուններուն վերջին ստուգումը: Առաջին հանգրուանին համար, կը կարծեմ, թէ ցանկը բաւարար է: (*Թալաթթ ինք կ'առնէ տետրակը եւ կը սկսի պահ մը անխօս ստուգել*):

Թալաթթ.- Ճենկիզ, ամիսներ առաջ, մեր երկրին վտանգ ներկայացնող հայ մտաւորականութեան անուանացանկը կազմած ժամանակս, նկատի չունեցայ Գրիգոր Չօհրապին անունը:

Ճենկիզ.- Այո՛, ճիշդ եւ փաշա: Անոր անուան չհանդիպեցայ:

Թալաթթ.- Ես այդպէս կողմնորոշուած էի, կարծելով, թէ ուլիղ ճամբու կը բերեմ մեր այս հին գոծակիցը, սակայն այսօր պարզ դարձաւ, թէ սխալած եմ: Սա պահուս վճռական կը հրահանգեմ՝ Ճենկիզ, Գրիգոր Չօհրապի անունը այս տետրակի անուանացանկին ամենավերը կը գրես: Նոր անուններ եւս կուտամ քեզի յետագային: Գործընթացը շարունակական պիտի ըլլայ ամբողջ տարուայ մէջ:

Ճենկիզ.- Հիմա, այստե՛ղ, սոուն չմեկնած ցանկին վրայ կ'աւելցնեմ Չօհրապի անունը: Ուրեմն շարքը հետեւեալ կերպ պիտի ըլլայ՝ Գրիգոր Չօհրապ, Ռուբէն Սեւակ (այսինքն Ռուբէն Չիլինկիբեան), Դանիէլ Վարուժան (այսինքն Դանիէլ Չիպուզբեարեան), Սիամանթօ (այսինքն Ատոմ Եարճանեան), Սողոմոն Սողոմոնեան, նոյնինքն Կոմիտաս վարդապետ), Ռուբէն Չարդարեան, Երուխան (այսինքն Երուանդ Սրմաթեշխանլեան), եւ այսպէս, փաշաս, երկուհարիւր հոգի: Երկուհարիւրը

ամբողջացնելու համար մէկ անուն կը պակսէր, այդ ալ Զօհրապը եղաւ, եւ անուանացանկը զլիսաորեց:

Թալաաթ.- Դիշդ է, Զօհրապին հետ, սուլթանին դէմ պայքարի օրերուն, կրցանք համագործակցիլ: Խելացի ու պատրաստուած մարդ է ան, բարձր մակարդակի իրաւաբան, ազդեցիկ անձնատրութիւն: Այդ օրերուն զինք լաւ ուսումնասիրեցինք. թէև իր մէջ գտանք շեշտուած ազգայնական հայը, սակայն միեւնոյն ատեն բացայայտեցինք սուլթանին արմատական հակառակորդներէն մէկը: Մեզի այդ էր պէտք տուեալ ժամանակաշրջանին: Վերջապէս կրցանք լեզու գտնել հետը: Բայց յետ այսու ան պիտանի անօթ մը չէ մեզի համար եւ զայն պիտի վերացնենք ամէն գնով:

Ճենկիզ.- Իսկ սուլթանի տապալումէն ետք ի՞նչպիսին էր իր կեցուածքը:

Թալաաթ.- Սուլթանի տապալումէն ետք, ես շարունակեցի բարեկամութիւնս անոր հետ: Հայկական հարցը Ապտիլ Համիտի տապալումով վերջ չգտաւ: Այդ իրողութիւնը մեզ յուզող կարեւորագոյն հարցերէն մէկն է: Զօհրապը ներգրաւելով իմ աշխատանքներուս մէջ, ուզեցի օգտուիլ հայերը զսպելու, կամ հանգստացնելու ռազմավարութեան համար: Սակայն, այդ ռազմավարութիւնը այս անգամ անյաջող եղաւ: Վնաս չունի:

Ճենկիզ.- Փաշաս, այն դասախօսութիւններու ընթացքին, որոնց ակնարկեցի քիչ առաջ, շատ մանրամասնութիւններու եւ վերլուծութիւններու տեղեակ եղայ: Հայերու նպատակները իսկապէս շատ վտանգաւոր են: Երկիրը պիտի պառակտեն եւ արեւելեան շրջաններէն ներս անկախութիւն պիտի յայտարարեն: Սասնոյ լեռներուն վրայ զէմքեր կը կուտակուին եւ զինավարժութիւններ կը կատարուին: Արագ պիտի շարժինք: Սասունցիները յամառ, կռուող ու մոլի ազգայնական լեռնականներ են:

Թալաաթ.- Իտտիհատի զլիսաւոր վարչութեան նիստերէն մէկուն մէջ, իմ ներկայացուցած ծրագիրը հաւանութեան արժանացաւ: Հայկական հարցին վերջակէտ պիտի դնեն: Պատերազմը լաւագոյն առիթն է այդ վերջակէտը դնելու: Ինձի Թալաաթ փաշա կ'ըսեն: Յեղափոխութիւն, կամ հայերու կողմէ ազա-

տագրական շարժում կոչուածը, ե՛լ ամբողջ Թուրքիոյ հայութիւնն արեան մէջ պիտի խեղդեն: Յայտնեմ նաեւ, որ համաթուրանական գաղափարի իրականացումը իմ այսագայ մեծ ծրագրիս մաս կը կազմէ: Իսկ յիշեալ ծրագրի իրագործման առաջին եւ հիմնական քայլը Հայկական Հարցին վերջ դնելն է ամէն գնով: Կը կրկնեմ՝ ամէ՛ն գնով:

Ճենկիզ. - Հայ մտատրականութեան ձերբակալութիւնները ե՞րբ պիտի սկսին: Բիշ առաջ, իմ կողմէս նոր նշանակուած *խաֆիէները* մօտս՝ ընդունարան եկան եւ տեղեկութիւններ բերին, թէ ցանկին վրայ գտնուողներէն ոմանք, զգալով հաւանական ձերբակալման վտանգը, կը պատրաստուին արտասահման անցնիլ:

Թալաաթ. - Ստանպուլի ոստիկանապետը մանրակրկիտ նախապատրաստուած է: Ձերբակալուելիք մարդոց անուանացանկը արդէն փոխանցած եմ իրեն, որուն մէջ սակայն չկայ Չօհրապիւն անունը, իսկ հասցէները վերջնականապէս ստուգուած են: Գաղտնի ոստիկաններու խիստ հսկողութիւնը կայ ամբողջ հայ մտատրականութեան բնակարաններուն վրայ: Երբ քիչ յետոյ տուն վերադարձաս, Գրիգոր Չօհրապի ձերբակալման հրամանագիրը կուտամ որ փոխանցես ոստիկանապետին: Ան այս գիշեր եւ վաղը ամբողջ օրը պիտի մնայ իր գրասենեակին մէջ: Ձերբակալութիւններու թուականը՝ 1915, Ապրիլի 24-ն է, այսինքն՝ այդ օրուայ կէս գիշերէն մինչեւ արշալոյս: Ճենկիզ, դուն անմիջապէս կը միանաս բանակի ընդհանուր ապահովութեան յատուկ քննիչ հազարապետ Ֆախրի պէյին: Ան՝ ձերբակալուած մտատրականներուն հարցաքննութիւնները պիտի կատարէ: Կը հետեւիս իր բոլոր ցուցմունքներուն: Հարցաքննութեան ձեւական կողմը պիտի պահենք, որպէս սահմանադրութեան եւ անկէ բխող օրէնքի գործադրութիւն: Այսբանը օտար պետութիւններուն համար է: Կը կրկնեմ՝ լոկ ձեակերպութիւն մը պիտի ըլլան հարցաքննութիւնները:

Ճենկիզ. - Հարցաքննութեան ժամանակ, խոստովանութիւն կորզելու համար որեւէ միջոցի պիտի դիմե՞նք: Խօսքս *ֆիզիքական* ճնշումներու մասին է:

Թալաաթ. - Այդ մասին Ֆախրի պէյին մանրամասնութիւններ փոխանցած եմ: Բայց, անշուշտ դուն եւս տեղեակ եղիր: Ինչ-

պէս քիչ առաջ նկատել տուի, հարցաքննութիւնները նկատի առնուած են օտար տէրութիւնները հանգստագնելու համար: Արդ, մեղադրեալներու հարցաքննութիւնը պէտք է կատարուի առանց *Ֆիզիքական* ճնշումներու, պարզ խօսքով առանց ծեծի կամ չարչարանքի: Արգելք պիտի չըլլանք, եթէ կարգ մը դեսպանատուներու ներկայացուցիչներ եւ օտար լրագրողներ երբեմն հետեւին գործի ընթացքին: Հաւանաբար աղմուկ բարձրանայ: Ֆախրի պէյ մեղադրեալներուն տրուելիք հարցումները արդէն պատրաստած է այնպէս, որ ականջալուր եղող օտարները պիտի համոզուին, թէ պատերազմի պայմաններուն տակ պետութեան ապահովութիւնը վտանգողներու հետ է մեր գործը: Ծենկիզ.- Սակայն փաշաս, մեղադրեալները օտար դէմքեր՝ լրագրողները կամ դեսպանատուներու ներկայացուցիչները տեսնելով, եթէ անոնք ներկայ գտնուին, պիտի քաջալերուին ու յամառին: Խոստովանութիւններ դժուար թէ կատարեն:

Թալաթ.- Զու նկատողութիւնդ տեղին է, սակայն գործի յետագայ ընթացքն է կարեւորը: Ըսի ու կը կրկնեն՝ հարցաքննութիւնները ձեւական պիտի ըլլան: Պատիժի գործադրութիւնը ոչոչուած է արդէն: Ով, ինչ ցուցմունք կ'ուզէ թող տայ, կամ ինչ խոստովանութիւն, որ ուզէ կատարէ: Գալիք օրերու գործողութեան ելքը որոշուած է:

Ծենկիզ.- Պատրաստ եմ հետեւելու գործի ընթացքին փաշաս: Պիտի կատարեն լաւագոյնս, Թուրքիոյ ապահովութեան համար կարեւորագոյն այս աշխատանքներու ժամանակ:

Թալաթ.- Մեր զինեալ ուժերու, քաղաքի ոստիկանութեան, շրջանային ժանտարմի եւ ընդհանուր ապահովութեան բոլոր ստորաբաժանումները պէտք է գործեն հետեւողական եւ նպատակասլաց: Այսօր, առանց իրենց պատիժները լիովին կրելու, հրահանգած եմ բանտերէն ազատել ոճրագործները, աւագակները եւ այլ յանցագործ տարրեր: Անոնք պետութեան միջոցներով պիտի փոխադրուին այն վայրերը, ուր նախատեսուած են արքայութիւն ձերբակալուած հայ մտատրականութիւնն ու միւս զանգուածները: Յանցագործները գործի պիտի մղեն, անոնք ժամանակաւորապէս իմ գործակիցները պիտի ըլլան: Արքայութիւններուն եւ մահուան դատապարտեալներուն քիւր մեծ պի-

տի ըլլայ, սպասածէդ շա՛տ մեծ, Դենկիզ: Խտրութիւն պիտի չդրուի հայ լուսաւորչականներուն, կաթոլիկներուն, բողոքականներուն, օսմանեան պետութեան բարեկամ ու անվտանգ կարծուածներուն կամ ձեւացնողներուն միջեւ: Բոլոր հայերն ալ, վերջին հաշուով, ինչ համայրի ու գաղափարի ալ պատկանին վտանգաւոր են:

Դենկիզ.- Թուրքը, որ հասած է տիրապետած է մինչեւ արաբական երկիրներ, Երոպա ու մինչեւ Մաղրեպ՝ հիսսիսային Ափրիկէ, քանի մը միլիոն հայերու հետ հաշի կրնայ տեսնել: Լեռնային շրջաններուն մէջ ոտքի կը հանենք քիւրտերը, շահագործելով անոնց կրօնական զգացումները: Անշուշտ յետագային նոյն լեռնականներուն հետ հաշի փակելը դիւրին է մեզի համար:

Թալաաթ.- Դենկիզ, կը վստահիմք եզգի: Այս գործը, որ արդէն սկսուած կարելի է համարել, կրնայ երկար տեսել: Ժամանակի հարց է: Միայն պիտի աշխատինք, պիտի աշխատինք յամառօրէ՛ն: Իսկ դուն անկասկած կը ստանաս վարձատրութիւնդ: Շուտով պաշտօնի բարձրացում կ'ունենաս: Յետագային նաեւ կ'արժանացնեմ շքանշաններու:

Դենկիզ.- Երախտապարտ ենք մեզի փաշաս:

Թալաաթ.- Բոլորիս աշխատանքներն ալ յանուն Թուրքիոյ է: Այս կայսրութիւնը ես պիտի ընդարձակեմ շատ աւելի, քան սուլթաններու օրով էր: Անոնք Երոպայի դասը ճիշդ չկրցան տալ: Սա պատերազմը իր յաղթական արարտին թող հասնի, յետոյ կը տեսնեն, թէ Թուրքիան՝ Թալաաթի խելքով է բազուկով ինչ բաներու ատակ է:

Դենկիզ.- Ես ուրեմն, առանց ժամանակ կորսնցնելու մեկնիմ Ստանպուլի ոստիկանապետին քով, յետոյ տուն կ'երթամ: Առաւօտ շուտ Ֆախրի պէյին հետ կ'ունենամ առաջին հանդիպումս՝ ինձի վստահուած գործի կապակցութեամբ:

Թալաաթ.- Դիշո՞ւ է: Դուն հիմա զնա՛ գործիդ: Երբ քիչ յետոյ ստանամ ճակատէն եկած լուրերու ամփոփագիրը, ես ալ պիտի մեկնիմ: Պատրաստ պէտք է ըլլալ ամէն տեսակի հաւանականութիւններու: Աստուած հետդ Դենկիզ:

(Դենկիզ՝ Թալաաթին բարի գիշեր մաղթելով դուրս կուգայ: Թալաաթ զլուխը կ'առնէ արիւնքուն մէջ: Վարագոյրը կ'իջնէ):

(Օսմանեան բանակի ընդհանուր ապահովութեան քննչական սենեակը: Ֆախրի պէյ եւ Ճենկիզ. ապա՝ Գրիգոր Զօհրապ, Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուրէն Սեւակ եւ Կոմիտաս Վարդապետ)

Ֆախրի Պէյ.- Ճենկիզ, հարցաքննութեան գործընթացը, ձեռկանօրէն անշուտ, պիտի կատարուի ելրոպական ըմբռնումներու համաձայն, ինչպէս կարգադրած է Թալաաթ փաշան: Հասանական է, որ դեսպանատուներու ներկայացուցիչներ կամ լրագրողներ անակնակալ դիմում ներկայացնեն ներկայ գտնուելու հարցաքննութեան: Պիտի ընդառաջենք:

Ճենկիզ.- Ֆախրի պէյ, կը խնդրեմ ըսէք ինձի՝ որո՞նք են պարտականութիւններս:

Ֆախրի Պէյ.- Պարտականութիւններդ կատարելը դժուար պիտի ըլլայ, բայց պէտք է, որ դիմանաս: Գործի ամբողջ ծանրութիւնը իմ ուսերուն է, իսկ դուն որպէս օգնականս, անմասն պիտի չմնաս այդ բեռէն: Նախ՝ հոգեբանականօրէն պատրաստ եղիր:

Ճենկիզ.- Կարելին, նոյնիսկ անկարելին պիտի ընեմ, որպէսզի ըստ էութեան վերահաստատեմ օսմանցիութիւնս:

Ֆարի Պէյ.- Նախ տեղեակ եղիր, մինչեւ արշալոյս, այսինքն, մինչեւ Ապրիլի 24-ի արեւածագը ձերբակալուեցան եւ Ստանպուլի կեդրոնացման կայաններու մէջ արգելափակուեցան ցանկով նախատեսուած երկուհարիւր հայ մտատրականներուն եւ ազգային գործիչներուն մեծ ու կարեւոր խումբը: Քանի մը ժամէն ձերբակալութիւնները կ'ամբողջանան: Քաղաքական գործիչներուն մէկ մասը, որ իշխանութեան ձեռքը անցած էր, աւելի բան վեց ամիսներէ ի վեր բանտերու մէջ են, կը սպասեն իրենց ճակատագրին: Կէս զիշերէն մինչեւ արշալոյս Թուրքիոյ մէջ մեր ժամանակներու ոստիկանական ամենալայն, արագ եւ շշմեցուցիչ գործողութիւնը տեղի ունեցաւ: Ապրիլի 24-ը օսման տարեգրութեան մէջ պիտի մնայ, որպէս Թալաաթ փաշայի քաղաքական մտքի եւ ոստիկանական տաղանդի օր:

Ճենկիզ.- Չերբակալուածներու այդքան մեծ զանգուածի հարցաքննութիւնը ի՞նչ ձեւով կամ հերթականութեամբ պիտի կատարուի:

Ֆախրի Պէյ.- Կեդրոնացման կայաններէն, ոստիկանական ջոկատները մեղադրեալներու փոքր խումբեր հերթականութեամբ կը բերեն այստեղ եւ մենք կը կատարենք մեր գործը, միշտ նկատի ունենալով մեր երկրի սահմանադրութեան եւ օրէնքի սկզբունքները: Հարցաքննութեան առաջին օրը մանաւանդ, շատ կարեւոր է: Օսմանեան նոր, սահմանադրական օրէնքներով պիտի տպաւորենք եւրոպացիները: Յետագայ բո՛ւն ծրագրի իրագործումը կը կայանայ իր ժամանակին, աշխարհի աչքերէն հեռու:

Ճենկիզ.- Մեր գործը մտաւարականութեան հետ է: Իսկ Անատոլի գրեթէ բոլոր շրջաններէն սովորական՝ ոչ մտաւորական հայերու արքորը, որ տեղի պիտի ունենայ, ո՞վ, որ օրէնքին հետ պիտի համաձայնեցուի այդ թշուառականներուն գործերը: Թալաթ փաշան երէկ ըսաւ, թէ անոնց թիւը իմ սպասածէս շատ աւելի մեծ է:

Ֆախրի Պէյ.- Վտանգաւոր հայ զանգուածներուն արքորը ամիսներ առաջ արդէն սկսած էր: Մենք հնարաւորին չափ քողարկեցինք այդ արքորները: Նախատեսուած երկու միլիոնի մօտեցող արքորականներուն ո՛չ հարցաքննութիւն կ'ըլլայ եւ ո՛չ դատավարութիւն: Անոնց ճակատագիրը որոշուած է՝ արքոր դէպի արարական կիզիչ անապատները, ճամբու ընթացքին զանգուածային ջարդեր ի կատար կ'ածուին: Հազարաւոր աւազակներ եւ ոճրագործներ բանտերէն ազատուած են Թալաթ փաշայի հրամանով: Այդպիսիներուն վստահուած է շատ կարեւոր գործին մէկ մասը: Բանակի եւ *ժամտարմէրիայի* ստորաբաժանումները կ'ամբողջացնեն մնացեալը:

Ճենկիզ.- Ֆախրի պէյ, այսօր քանի՞ հոգի պիտի հարցաքննուին:

Ֆախրի Պէյ.- Այսօրուայ համար նկատի առած են հինգ հոգի, որոնք են՝ Գրիգոր Չօհրապ, Ռուրէն Սեւակ, նոյնիմբն՝ Ռուրէն Չիլիկիրեան, Դանիէլ Վարուժան, նոյնիմբն՝ Դանիէլ Չիպուզբեարեան, Սիամանթօ, նոյնիմբն՝ Ատոմ Եարճանեան, Կոմի-

տաս Վարդապետ, նոյնինքն՝ Սողոմոն Սողոմոնեան, որ հայ եկեղեցիի փափագներէն է:

Ճենկիզ.- Ե՞րբ ատեան բերենք առաջին մեղադրեալը:

Ֆախրի Պէյ.- Նախ անցիք քարտուղարութեան սենեակը եւ քարտուղարէն ուզէ հինգ մեղադրեալներուն նկատմամբ դատախազութեան մեղադրական եզրակացութիւնները: Սանաւանդ առաջին հինգի հարցաքննութեան ժամանակ, մենք երկուքով ենք Ճենկիզ: Չեմ ուզեր, որ անձնական քարտուղարս նոյնիսկ մեզի հետ մասնակից դառնայ քննութեան աշխատանքներուն: Փաշային հետ այդպէս համաձայնեցանք: *(Ճենկիզ պահ մը դուրս կուգայ, ապա կը վերադառնայ համապատասխան թղթածրարով ծրարով եւ կը ներկայացնէ Ֆախրի պէյին):* Ճենկիզ.- Ընդունեցէք հինգ մեղադրեալներուն թլքածրարը պէյս:

(Ֆախրի պէյ կը ստանձնէ թղթածրարը եւ անոնց մէջէն նախ կ'առանձնացնէ Գրիգոր Զօհրապի գործը, ապա Ճենկիզին դիմելով):

Ֆախրի Պէյ.- Ճենկիզ, ռազմական ապահովութեան պաշտօնեայի մը օգնութեամբ, զնա՛ եւ մեկուսարան-նկուղէն Գրիգոր Զօհրապը այտեղ բեր: Երբ կը վերադառնաք, ձեզ ընկերակցող պաշտօնեան ներս թող չմտնէ: Ինչպէս նկատել տուի, այսօր երկուքով պիտի աշխատինք այս սենեակէն ներս:

(Ճենկիզ դուրս կուգայ եւ պահ մը յետոյ Զօհրապին հետ կը վերադառնայ հարցաքննութեան սենեակ: Մեղադրեալին ձեռքերը կապուած են, ան յոգնած տեսք ունի):

Ճենկիզ.- *(Զօհրապին)* Ոտքի կեցիք, մինչեւ հազարապետ պէյը քեզի հրահանգէ ընելիքդ:

Ֆախրի Պէյ.- *(Ճենկիզին)* Մեղադրեալին ձեռքերը ազատ արձակէ: *(Հրամանը կը կատարուի, Ֆախրի պէյ կը կարդայ դատախազութեան մեղադրական եզրակացութիւնը):* Մեղադրեալ Գրիգոր Զօհրապ, օսմանեան քաղաքացի, ծննդավայրը Ստանպուլ, մասնագիտութեամբ փաստաբան: Են՞շդ է, դո՞ւն նոյն անձն ես:

Գրիգոր Զօհրապ.- Այո, ես փաստաբան Գրիգոր Զօհրապն եմ, օսմանեան քաղաքացի: Սակայն դուք չյիշատակեցիք իմ

ամենակարեւոր պաշտօնս, ես նաեւ օսմանեան խորհրդարանի անդամ եմ:

Ֆախրի Պէյ.- Այդ մասին դատախազութեան մեղադրական եզրակացութեան մէջ արձանագրութիւն մը կայ: Սակայն սա պահուս պաշտօնապէս կը յայտարարեմ, որ դուն յետ այսու օսմանեան խորհրդարանի անդամ չես:

Գրիգոր Չօհրապ.- Ես ընտրուած եմ ժողովուրդի ձայներով եւ անձեռնմխելի եմ:

Ֆախրի Պէյ.- Խորհրդարանի նախագամն ու մեծ վեզիրը քեզի գրկած են այդպիսի պաշտօնէ եւ նոյն պաշտօնին վայելած իրատունքէն: Իմ կատարած այս յայտարարութեան մասին պաշտօնական արձանագրութեան պատճէնը կցուած է մեղադրական գործիդ: Դուն մեղադրուած ես օսմանեան պետութեան ղեմ կատարուած դաւաճանութեան մէջ:

Գրիգոր Չօհրապ.- Ես այս երկրին համար ծառայած եմ տարիներ շարունակ: Դաւաճանութեան մեղադրանք անձիս հանդէպ ոչ ոք կրնայ հիմնադրել:

Ֆախրի Պէյ.- Պետութեան ընդհանուր ապահովութեան սպասարկութիւնները փաստեր ունին, որ դուն կը համագործակցիս Թուրքիոյ քանդումին ու մասնատումին համար դաւադիր ուժերուն հետ: Գործակից ես նաեւ թշնամի օտար պետութիւններու: Պատեքազմի այս պայմաններուն տակ, քու յանցարդ աւելի կը ծանրանայ: Արարքդ կը դիտուի որպէս դաւաճանութիւն պետութեան հանդէպ:

Գրիգոր Չօհրապ.- Այդպիսի մեղադրանք նոյնիսկ ժիծադելի է: Ես բարեկամական յարաբերութիւն ունիմ Թալաս փաշային հետ: Դեռ երէկ զիշեր միասին էինք սպայից ակումբէն ներս: Այս մեղադրանքներուն եւ ձերբակալութեան մէջ սխալմունք կայ: Կը պահանջեմ, որ հիմա լուր տրուի փաշային կացութեանս մասին:

Ֆախրի Պէյ.- Սեղադրեալ, աչքիս սուջեւ, քու թղթածրախդ մէջն է նաեւ ձերբակալմանդ հրամանագիրը, ստորագրուած՝ Թալաս փաշայի կողմէ: Ինձ հետաքրքրողը ա՛յս փաստաթուղթն է: Չեր անձնական նախկին բարեկամութեան հետ ես գործ չունիմ:

Գրիգոր Զօհրապ.- Չեմ ընդունիր ներկայացուցած մեղադրանքները: Անոնք կեղծ են ու շինծու: Կը պահանջեմ, դրամական երաշխատրութեամբ ինձ ազատ արձակել այսօր: Յետագային դատարանին մէջ կրնամ պաշտպանել անձս:

Ֆախրի Պէյ.- Պետութեան դաւաճանութեան մէջ մեղադրուողին համար, դրամական երաշխատրութեամբ, մինչեւ դատավարութեան օրը, ազատ արձակել անկարելի է:

Գրիգոր Զօհրապ.- Հարազատներս այս ապօրինի ձերբակալութեանս պարագան, երոսլական պետութիւններու ուշադրութեան կը յանձնեն: Ես պատահական մարդ չեմ: Այս թատերականացուած հարցաքննութիւնը ետ կը շարտեմ երեսիդ, հազարապետ Ֆախրի: Ըսածներս փոխանցէ Թալաաքին:

Ֆախրի Պէյ.- Նախ, դուն քեզ զուսպ պահէ: Արդարադատութեան ատեանները պարտաւոր են յարգելու: Յետոյ, դատարարութեան մէջ մեղադրուողին համար, օտար պետութիւններ չեն ուզեր ժամանակ վատնել, որովհետեւ նոյնպիսի յանցանքներու մէջ մեղադրուողները, աշխարհի որեւէ պետութեան օրէնքով պաշտպանութեան ենթակայ չեն: Եթէ պաշտպանուելիք կողմ մը ունենայիր, օսմանեան արդարադատութիւնը քեզի կ'օգնէր: Իսկ պետութեան պատասխանատու դէմքեր, իրենց պարտականութիւնները կատարելուն պահուն բարոյական վիրաւորանք հասցնելով համար դատարանին մէջ առանձին հաշիւ կուտաս: Այսքանը բաւական է: *(Դիմելով ճենկիզին)* Մեղադրեալը տար մեկուսարան եւ ատեան բեր յաջորդը:

(ճենկիզ կը կապէ Գրիգոր Զօհրապի ձեռքերը եւ դուրս կը տանի, պահ մը յետոյ Ռուրէն Մեակը կը բերէ ներս:)

ճենկիզ.- Ահաւասիկ, երկրորդ մեղադրեալը հարցաքննութեան ատեանին առջեւն է պէյս:

Ֆարի Պէյ.- *(Դիմելով ճենկիզին)* Մեղադրեալին ձեռքերը ազատ արձակէ: *(Հրամանը կը կատարուի):* Մեղադրեալ Ռուրէն Մեակ, իսկական անոնով՝ Ռուրէն Չիլինկիրեան, ծնած է Ստանպուլ, օսմանեան քաղաքացի, մասնագիտութեամբ բժիշկ: Յիշեալ անձը դո՞ւն ես:

Ռուբէն Մեակ.- (Արեւմադարական ձեւով) Այո, ես եմ Ռուբէն Մեակը, այսինքն՝ Ռուբէն Չիլիկիլիբեանը, մասնագիտութեամբ բժիշկ եւ գրող:

Ֆարի Պէյ.- Թուրքիոյ ընդհանուր ապահովութեան յատուկ սպասարկութիւններու հաւաստի տուեալներուն վրայ հիմնուելով, դատախազութիւնը Ռուբէն Չիլիկիլիբեանին կը մեղադրէ հակապետական գործունէութեան մէջ: Ան սերտ կապերու մէջ է հայ յեղափոխական կազմակերպութիւններու հետ: Իր միջոցով կատարուած են անողղակի հանգանակութիւններ յեղափոխական անջատողականները *Ֆինանսատրեյու* համար: Ամուսնացած է ոչ օսմանցի օրիորդի հետ: Թուրքիոյ մէջ քանդիչ գործողութիւններ կատարող խմբաւորումներուն օգնած է նաեւ խորհրդատուութեամբ, միեւնոյն ատեն կապ հանդիսանալով անջատողականներու եւ օտար պետութեան մը միջեւ: Տիրոջ պատերազմական դրութեան հետեւանքով յատկապէս, Ռուբէն Չիլիկիլիբեանի գործունէութիւնը Թուրքիոյ սահմաններէն ներս, դաւաճանութիւն է օսմանեան պետութեան հանդէպ:

Ռուբէն Մեակ.- Չեր այդ մեղադրանքները մազաշափ մը նոյնիսկ արժէք չունին ինձի համար: Այստեղ կատարուածը այսօր, թատերախաղ է եւ ոչ ուրիշ բան: Մոյն թատերախաղով, դուր՝ ելոյտակական պետութիւններու աչքին փոշի ցանել կ'ուզէք: Բայց ոչ ոք պիտի հաւատայ սուտ ու անհիմն բեմադրութեան: Հարիւրհազարաւոր հայեր շատոնց անապատներ արքարուած են եւ տեղի կ'ունենայ ահաւոր ցեղասպանութիւն: Դուք լաւ գիտէք ցեղասպանութեան կամ եղեռնի իմաստը, որովհետեւ հակամարդկայնին այդ երեսոյթը մասնատրապէս, օսմանցի պետական այրերու ձեռքերուն գործը եղած է անցեալին եւ նոյն թափով կը շարունակուի մեր օրերուն եւս:

Ֆարի Պէյ.- Չափոյ գիտցիր եւ յարգէ այս ատեանը: Դուն կը գտնուիս օրէնքի եւ արդարադատութեան ներկայացուցիչին, միեւնոյն ատեն այս երկրի ապահովութեան պատասխանատուին առջեւ: Այս ելոյթովդ, հաստատեցիր արդէն այն մեղադրանքները, որ եզրակացուցած էր դատախազութիւնը:

Ռուբէն Մեակ.- Ես պիտի խօսիմ, որովհետեւ համոզուած եմ, եր ուրիշ առիթ պիտի չունենամ ո՛չ խօսելու եւ ո՛չ իրականու-

թիւնները ձեր երեսին շարտելու: Ի՞նչ, ի՞նչ գրչեղբայրներուս, ինչպէս նաեւ ազգակիցներուս, որոնք կ'ապրին այս հողին վրայ մահավճիռը տրուած է արդէն: Ինչ որ կը կատարուի հիմա, ձեռակառնութիւն է: Այն անմեղ արիւնը, որ դուք կը հոսեցնէք, ձեր զաւակներու վզին պիտի ըլլայ: Պիտի զայ ժամանակը եւ պատասխան պիտի տար: Այո', պատասխան պիտի տար պատմութեան, ամբողջութեան ու հայութեա՛ն առջեւ: Չեր դատաստանը պիտի ըլլայ դատաստաններուն ծանրագոյնը: Այսօր եղեռնագործութիւնը արգիլելու համար, ձեր ձեռքերը բռնող չկայ: Վաղը երբ իյնաք, նոյնպէս ձեր ձեռքերէն բռնող մը պիտի չըլլայ:

Ֆախրի Պէյ.- Ծենկիզ, հեռացուր այս անգուսպ ըմբոստը: Թոյլ տուի այդ բոլոր մտածածները արտայայտուի, որպէսզի ինքնադատասպարտումը կատարէ, դէռ դատարան չներկայացած: Այս բժիշկին հարցաքննութեան մասին լրատութիւն կատարէ մամուլին եւ յատկապէս օտար մամուլին: Թող տեղեակ ըլլայ աշխարհ, թէ ի՞նչնչպիսի գործակիցներ ունին *քոմիթսանները*: Ծենկիզ, շուտ մեկուսարան տար Չիլինկիթեան կոչուածը եւ հետդ բեր երրորդը: Եթէ այս մարդը ստելի երկար հարցաքննեմ, սրտի կատուած պիտի ունենամ:

(Ռուրէն Սեւաւակի ձեռքերը կրկին կը կապուին եւ Ծենկիզ գինը կը տանի: Բիշ յետոյ կը վերադառնայ Դանիէլ Վարուժանին հետ, որուն ձեռքերը կապուած են):

Ֆախրի Պէյ.- *(Ծենկիզին)* Մեղադրեալին ձեռնակապերը արձակէ: *(Ֆախրի պէյ կը կարդայ մեղադրանքը)* Դանիէլ Վարուժան, իսկական մականունը Չիպուզքեարեան, ծնած է Սեբաստիա, Բկնիկ գիւղ, օսմանեան քաղաքացի, բանաստեղծ: *(Դիմելով Դանիէլ Վարուժանին)* յիշեալ անձը դո՞ւն ես:

Դանիէլ Վարուժան.- Այո, ես եմ:

Ֆախրի Պէյ.- Դանիէլ Չպուզքեարեան, դուն օսմանեան հայրենիքի ընդհանուր ապահովութեան կողմէ կը մեղադրուիս հակապետական գործունէութեան մէջ: Հայ օսմանեան քաղաքացիները կը գրգռես պետութեան դէմ քու գրած ազգայնական բանաստեղծութիւններովդ: Օտար պետութիւններուն տեղեկութիւններ կը փոխանցես Անատոլիոյ շրջանէն ներս կատարո-

լամ տեղաշարժերու մասին, որոնք պետական գաղտնիքներ են պատերազմի պայմաններու բերումով: Կապեր ունիս նաեւ քահնիչ գործունէութեամբ զբաղուող *քոմիքաճներու* հետ: Ուսումնայ ստացած եւ Իտալիոյ հայկական՝ հոգեւոր Մուրատ Ռափայելեան դպրոցին մէջ: Ընդհանուր ապահովութեան սպասարկութիւններու հասաստի տեղեկութիւններուն համաձայն, այդ կրթական հաստատութեան յարկին տակ ազգայնականներ կը պատրաստուին եւ կ'ուղարկուին Թուրքիա յատուկ առաքելութիւններով: Դուն անոնցմէ մէկն ես, եւ բոլորէն աւելի վտանգատորր: Պատերազմական ներկայ դրութեան մէջ քու արարքդ համագօր է դաւաճանութեան:

Դանիէլ Վարուժան.- Ընդհանուր ապահովութեան սպասարկութիւններուն կողմէ հասցէիս կատարուած բոլոր մեղադրանքներն սղ անհիմն են: Դուք մեղադրանքներ կարդացիք անձիս մասին, սակայն ոչ մէկ փաստ կար ձեր խօսքին մէջ: Եթէ ա՛յս սկզբունքով պիտի առաջնորդուի արդարադատութիւնը, Թուրքիոյ մէջ ռեւէ անձ, ամենակատարեալ ազնիւ քաղաքացին իսկ կրնայ մեղադրուիլ զանազան յանցանքներու մէջ, մանաւանդ՝ օտար պետութեան մը հետ գործակցելու յանցանքով: Մուրատ Ռափայելեան դպրոցը՝ դպրոց է բառիս բուն իմաստով, ուր հաւատքի լոյս ու զիտութիւն փոխանցուեցաւ ինձի:

Ֆարի Պէյ.- Բանաստե՛ղծ, աղաղակոյ փաստե՛ր են քու գրած տասնեակ բանաստեղծութիւններդ: Այդ ո՞ր ջարդի մասին է, որ դառնութեամբ կը խօսի համանուն բանաստեղծութիւնդ:

Դանիէլ Վարուժան.- Միթէ՞ տեղեակ չէք, թէ ջարդեր տեղի ունեցան ե՛ւ կ'ունենան այս երկրին մէջ: Ջարդերու մասին գրել, չինչանակեր հայրենիքի դէմ գրել, կամ դաւաճանել: Ես սլարգապէս, որպէս բանաստեղծ կ'արձագանգեմ իրականութիւններուն: Հայութիւնը կը տառապի Թուրքիոյ սահմաններէն ներս: Իրականութիւններու մասին գրել քաջութիւն է, մանաւանդ ներկայ պայմաններու տակ, ուր ազատութիւնները կաշկանդուած են:

Ֆախրի Պէյ.- Վերոյիշեալ բանաստեղծութիւնդ եւ բազմաթիւ ուրիշ բանաստեղծութիւններ, մեր գրականագէտ քննիչներուն կողմէ վերլուծուած են: Անոնցմէ շատերը բացայայտ, իսկ շատ-շատերուն մէջ սողներուն միջեւ բազմուած են վտանգատոր

գաղափարներ: Տեղեակ ենք, թէ «Հարճը» բանաստեղծութիւնը, թէւ հեթանոսական մտածողութեան արտայայտութիւն է, սակայն միեւնոյն ատեն ձեր հիմն, անյայտացած, հետքերը կորսնցուցած անցեալի ոգեկոչումն է: Ո՞վ է այդ Սիւնեաց Բակուր Նահապետը: Դուն վտանգաւոր ազգայնական ես: Այս երկրին մէջ ազգեր, ազգութիւններ, ժողովուրդներ գոյութիւն չունին. կայ մէկը միայն՝ օսմանցի՛ն, իր լեզուով, հաւատքով ու մշակոյթով: Ուրիշ բաներու մասին մի՛ մտածէք:

Դանիէլ Վարուժան. - Բայց անհատի մտածումները վերահսկելի չեն, նոյնիսկ օսմանեան իրականութեան մէջ: Դիշդ է, թէ մենք օսմանեան պետութեան քաղաքացիներ ենք, սակայն մեր ազգային ինքնութիւնը ոչ ոք իրաւունք ունի խլելու մեզմէ: Հայուն անցեալը այս հողին վրայ հազարամեակներուն խորքերը կ'երթայ:

Ֆախրի Պէյ. - Ուրիշ փաստի մը մասին պիտի խօսիմ. դուն ուսանած ես նաեւ Եւրոպա, Կանտի համալսարանը: Այդ տարիներուն կապեր չե՞ս ունեցած այն *քովիքաճներու* հետ, որոնք այդ կողմերը հանգրուանած՝ ծրագիրներ կ'որոճային Թուրքիան մասնատելու:

Դանիէլ Վարուժան. - Ես սովորական ուսանող էի Եւրոպայի մէջ, հազիւ կրնայի գոյութիւնս պահպանել օտար ավերուն վրայ: Ոչ մէկ յեղափոխականի հանդիպած կամ գործակցած եմ:

Ֆախրի Պէյ. - Վերջին հարցում մը՝ ի՞նչ զգացումներով գրած ես «Դերենիկը» բանաստեղծութիւնը, զոր իր վերլուծութիւնով միասին կցուած է մեղադրական եզրակացութեան մէջ, այսինքն որպէս փաստ՝ ազգայնամոլութեանդ:

Դանիէլ Վարուժան. - Այդ բանաստեղծութիւնը գրած եմ հայու զգացումովս: Եթէ ձեր գրականագէտ վերլուծողները այդ գործն ալ մեկնաբանած են, կը նշանակէ, թէ զիտէք անոր բովանդակութիւնն ու իմաստը: «Դերենիկը» բանաստեղծութեան մէջ ուրիշի հանդէպ ատելութիւն չկայ, այլ՝ ինքնապաշտպանութեան սրտարուխ կոչ է ուղղուած այն հայ սլատանիին, որ իր թուրք հասակակիցին կողմէ կը խոշտանգուի, վերջինիս ծնողներուն արքիչն առջեւ եւ անոնց քաջալերութեամբ: Սենք շատ

կանուխն պիտի սորվէինք ինքնապաշտպանուիլ: Այս երկրին մէջ ապրելու ուրիշ ելք չկայ:

Ֆախրի Պէյ.- *(Դիմելով Ճենկիզին)* Մեկուսարան վերադարձուր Չիպուգբեարեանին, ապա հարցաքննութեան բեր Սիամանթօն, այսինքն Ատոմ Եարճանեան մեղադրեալին:

(Ճենկիզ կապելէ յետոյ Դանիէլ Վարուժանի ձեռքերը դուրս կը տանի: Պահ մը յետոյ կը վերադառնայ Սիամանթոյին հետ, որուն ձեռքերը կապուած են):

Ֆարի Պէյ.- *(Դիմելով Ճենկիզին)* Մեղադրեալին ձեռքերը ազատ արձակէ: *(Հրամանը կը կատարուի, Ֆախրի պէյ մեղադրականը կը սկսի կարդայ):* Սիամանթօ, իսկական անունով՝ Ատոմ Եարճանեան, ծնած է Ակն, օսմանեան քաղաքացի, բանաստեղծ: Յիշատակուած ամօր դո՞ւն ես:

Սիամանթօ.- Այո՛, ես եմ:

Ֆախրի Պէյ.- Թուրքիոյ ընդհանուր ապահովութեան ունեցած բազում տեղեկութիւններու համաձայն, դուն քու բանաստեղծութիւններովդ կը գրգռես հայախօս օսմանցի միամիտ քաղաքացիները՝ ընդդէմ պետութեան: Կը համագործակցիս օտար պետութեան մը հետ, աւելի յստակ՝ Ռուսաստանի հետ: Այցելած ես Կովկաս, շփումներ հաստատելով ռուսահայ յեղափոխականներուն հետ, որոնք նպատակ ունին մասնատել Թուրքիան: Կապեր հաստատած ես նաեւ Շապին Գարահիսարցի Անդրանիկին հետ, այսինքն՝ Անդրանիկ Օզանեանին հետ, որը մեր պետութեան դէմ պայքարի ելած է տարիներէ ի վեր: Ստանալովի եւ Անատոլոյի տարբեր շրջաններուն մէջ կը մասնակցիս գաղտնի ժողովներու, քանդիչ գործունէութեան համար կ'ոգեւորես հայրենակիցներդ:

Սիամանթօ.- Ես բանաստեղծ եմ եւ իմ ներշնչումներէն ու խիղճէս մեկնելով կը գրեմ: Մեղադրանքները, որոնք կատարուեցան բոլորովին անհիմն են:

Ֆախրի Պէյ.- Դուն միւս հայ գլոտներէն ամենէն շատ եւ ամենէն երկար ժամանակով գտնուած ես արտասահման՝ Եւրոսյա, Ամերիկա, ինչպէս քիչ առաջ նկատել տուի՝ Կովկաս, այսինքն ռուսական կայսրութեան պատկանող երկիրներ: Ո՞րն էր նպատակը այդ շրջագայութիւններուն: Սիթե՞ղուն հայրուստ

մարդ ես: Ո՞վ քեզի եւ ի՞նչ նպատակով գումարներ կը տրամադրէ ճամբորդութիւններ կատարելու համար:

Միամանթօ.- Ճամբորդութիւններս կատարած եմ իմ խնայած դրամներով: Ոչ ոքէ նպաստ կամ վարձք չեմ ստացած: Ես նիւթապէս բաւարարուած մարդ եմ:

Ֆախրի Պէյ.- Դուն ակնցի՞ ես:

Միամանթօ.- Անշուշտ, ես ակնցի եմ ու հպարտ՝ իմ պատկանելիութեամբ:

Ֆախրի Պէյ.- Եթէ ակնցի ես, ուրեմն ճանչցած պիտի ըլլաս Բարկէն Սիւնին:

Միամանթօ.- Այո՛, ինձ եւ ամբողջ Ստանպուլին, ճաշ Եւրոպայի՛ն ծանօթ է Բարկէն Սիւնիի անունը: Ան նոյնպէս ակնցի էր, իմ հայրենակիցը:

Ֆախրի Պէյ.- Դուն գլտե՞ս, թէ Բարկէն Սիւնին ի՞նչ գործերու մէջ էր եւ ի՞նչ պայմաններու տակ մահացաւ:

Միամանթօ.- Այո՛, գիտեմ: Ան գոհուեցաւ Ստանպուլի Օթոման դրամատան յայտնի գործողութեան ժամանակ:

Ֆախրի Պէյ.- Սա հաշուով, ծննդավայրդ եղած է յեղափոխականներու օճախներէն մէկը այս հողին վրայ: Այդ հիմնատր պատճառ չէ՞, որ դուն եւս մաս կազմած ըլլաս Թուրքիան մասնատելու եւ քանդելու լծուած ուժերուն:

Միամանթօ.- Ես քաղաքական գործիչ չեմ, սակայն գրող եմ, եւ ազգիս շահերը պաշտպանելէ չեմ խուսափիր: Միթէ՞ այսքանը քանդիչ գործունէութիւն է: Եւ յետոյ, կ'ուզեմ հաստատում մը կատարել՝ ծննդավայրս Ակն, Թուրքիոյ տուած է բազմաթիւ ամիրաներ, որոնք իրենց ուշիմութեամբ, խելքով ու տաղանդով ծաղկեցուցին երկիրը անցեալին: Ակնցիները, եւ ընդհարապէս հայութիւնը շինարար քաղաքացիներ են: Իսկ դուք հիմա, քանդիչներ, կամ քանդողի գործակիցներ կը փնտռէք: Բարկէն Սիւնին եւ իր գործակիցները այս երկրէն ներս արդարութեան ու հաւասարութեան համար կը պայքարէին: Անոնք իրենց արարքով աշխատեցան ցնցել սուլթանը, Եւրոպան եւ ընդհանրապէս աշխարհի խիղճը: Կը զգամ, ժամանակը հասած է. ես՝ Միամանթօսն ալ պիտի մեռնիմ ազատութեան ճամբուն վրայ: Բայց Միամանթօսն երգելով կ'ուզէ մեռնիլ:

Ֆախրի Պէյ.- Գնա՛ եւ մեկուսարանիդ մէջ շարունակէ փիլիսոփայել, բանաստե՛ղծ: Ուրիշ ըսելիք ունի՞ս: Եւրոյթներովդ ամբողջ մտածումներով եւ էութեանդ մասին խօսեցար: Աւելի ժամանակ չեմ կրնար տրամադրել: Բեզի կանխող հարցաքննողներէն ոչ ոք, ինչպէս եւ դուն, ձեր յանցանքները ընդունելու քաջութիւնը չունեցար: Տեսնենք, քիչ յետոյ, փափազը ինչ ընթացքի մէջ պիտի գտնուի: (*Դիմելով Ճենկիզին*), այս բանաստեղծն ալ տար մեկուսարան եւ հետոյ բեր հայոց Եկեղեցիի սպասատր Սողոմոն Սողոմոնեանը, այսինքն Կոմիտաս հոգեւորականը:

(Ճենկիզ Միամանթոյի ձեռքերը կապելով դուրս կը տանի. պահ մը յետոյ ներս կը բերէ ձեռքերը կապուած Կոմիտաս Վարդապետը):

Ճենկիզ.- Պէյս, ահաւասիկ այս օրուան համար հարցաքննութեան ենթակայ վերջին՝ հինգերորդ մեղադրեալը:

Ֆախրի Պէյ.- Ճենկիզ, փափագին ձեռքերը արծակէ: Անոր գաւաթ մը ջուր ալ բեր: Կարծես, թէ ընկճուած տեսք ունի: (*Հրամանը կը կատարուի: Այլա կը կարդայ Կոմիտասի մասին եղած մեղադրական եզրակացութիւնը*): Սողոմոն Սողոմոնեան: Ծնած է Բեօթահեա, օսմանեան քաղաքացի: Փոքր տարիքէն ընդունուած է հայերու սրբազան քաղաքի՝ Էջմիածնի կրօնական ճեմարանը ու յետագային ձեռնադրուած է կուսակրօն քահանայ հայ եկեղեցիի օրէնքներուն համաձայն: Հոգեւոր ծառայութիւններուն զուգահեռ զբաղուած է երաժշտութեամբ: Ֆրանսայի եւ Գերմանիոյ մէջ մասնագիտացած է երաժշտութեան բնագաւառին մէջ: Վերջին տարիներուն հաստատուած է Ստանպուլ, ուրկէ իր կազմած երգչախումբերով շրջած է Թուրքիոյ գանազան քաղաքներն ու շրջանները, հայախօս օսմանցիներու զգացումները գրգռելու համար օսմանեան պետութեան դէմ: Ծածուկ այլ գործերու եւս ձեռնարկած է: Անցեալին, ռուսական կայսրութեան մէջ իր ուսանած եւ ապրած տարիներուն, գործակցած է յեղափոխական գործիչներուն հետ: Իր Թուրքիա հաստատուիլը մաս կը կազմէ մեր երկիրը մասնատելու ընդիանուր այն ծրագրին, որը կը հետապնդեն կարգ մը յեղափոխականներ եւ թշնամի պետութիւններ: Պատերազմա-

կան այս պայմաններուն մէջ Սողոմոն Սողոմոնեանի արարքը համազօր է օսմանեան պետութեան դէմ դաւաճանութեան:

Կոմիտաս Վարդապետ.- Ես ամէն բանէ առաջ հոգւորական եմ, հայ եկեղեցւոյ ծառան: Ասկէ անկախ, երաժիշտ-տեսաբան եմ եւ կեանքիս կարեւոր մէկ մասը նուիրած եմ արուեստին: Ճիշդ է, իմ հոգեւոր կրթութիւնս ստացած եմ Սուրբ Էջմիածնի մէջ: Բայց այդ չի նշանակեր, որ կապեր հաստատած եմ յեղափոխական գործիչներու, կամ օտար պետութեան մը սպասարկութիւններուն հետ՝ ընդդէմ Թուրքիոյ: Եւրոպա իմ ուսումնառութեան տարիներուս խորացուցի երաժշտական գիտելիքներս: Ստանպուլ հաստատուեցայ զուտ հոգեւոր եւ երաժշտական գործունէութեան նպատակով:

Ֆախրի Պէյ.- Հոգեւորական կամ երաժիշտական ասպարէզը յանցագործութիւն մը չէ անշուշտ, սակայն Թուրքիոյ ընդհանուր ապահովութեան սպասարկութիւններու հսկիչները, իրենց յատուկ միջոցներով տեղեակ եղած են, թէ, ինչպէս մեղադարական եզրակացութեան մէջ նշուած է, դուն այս երկրի զանազան քաղաքներուն եւ շրջաններուն մէջ երգի ու երաժշտութեան միջոցով հայախօս օսմանցիները ոտքի կը հանես: Երգն ու երաժշտութիւնը, միանալով բանաստեղծութեան խօսքին, վտանգաւոր կոչեր կը տարածուին:

Կոմիտաս Վարդապետ.- Ես քաղաքական գործիչ չեմ: Հետամուտ եմ հոգեւոր կոչումիս եւ մասնագիտական ասպարէզիս: Եթէ կ'ուզէք անպայման դաւադրութիւն տեսնել իմ աշխատանքներուն մէջ, ձեր գործն է: Խիղճս խաղաղ է:

Ֆախրի Պէյ.- Դուն դասախօսութիւններ տուած ես Ստանպուլի եւ Անատոլիոյ հայախօս տարբեր շրջաններուն մէջ: Ի՞նչեր էին նիւթերդ:

Կոմիտաս Վարդապետ.- Դասախօսութիւններ այո, տուած եմ: Խօսած եմ հոգեւոր նիւթերու եւ երաժշտութեան առնչուող հարցերուն: Կարեւորութեամբ անդրադարձած եմ հայկական երաժշտական հին խազերու վերծանման աշխատանքներու: Ես՝ թուրք երաժշտական շրջանակներու հետ եւս հանդիպումներ ունեցած եմ: Այս երկրէն ներս գործունէութիւնս կիմնակաւնին մէջ եղած է արուեստի՝ երաժշտութեան բնագաւառէն ներս:

Կրնաք իմ մասին ճիշդ տեղեկություններ ստանալ «Թխրք Օճախ» մշակութային կազմակերպութենէն:

Ֆարի Պէյ.- Սակայն յստակ տեղեկութիւններ կան, որ դուն քու յիշած աննեղ նիւթերու շարադրման ժամանակ, հայկական միջավայրերէն ներս առիթներ գտած ես օսմանեան տէրութեան հին թշնամիներէն Սկրտիչ Փորթուզալեանի մասին խօսելու, մասնաւորապէս Վանի, Ստանպուլի, յետագային նաեւ Ֆրանսայի մէջ անոր ծաւալած հակաթուրքիա գործունէութեան շուրջ:

Կոմիտաս Վարդապետ.- Սկրտիչ Փորթուզալեանին ես ծանօթ եմ անունով: Ինք քաղաքական գործիչ եղած է, իսկ ես հոգեւորական եւ երաժիշտ եմ: Մեր միջեւ ընդհանուր եզրեր չկան յեղափոխական համագործակցութեան համար: Եղածը անհիմն մեղադրանք է: Կը բողոքեմ անմեղ հոգեւորականի մը հանդէպ ցուցաբերուած այս վերաբերմունքին համար:

Ֆախրի Պէյ.- Փաստուած տեղեկութիւններ կան, որ դուն Ֆրանսա գտնուած շրջանիդ, ձեռք ձգած ես Փորթուզալեանի Մարսիլիոյ մէջ հրատարակած «Արմէնիա» թերթի օրինակներէն, ինչպէս նաեւ այլ վտանգաւոր հրատարակութիւններ հետդ բերած ես Թուրքիա, անջատողական շարժումները խանդավառելու նպատակով:

Կոմիտաս Վարդապետ.- Ես հայ գրի, գրականութեան, երաժշտութեան ժառանգութեան հետագօտող մըն եմ: Կը գտնեմ եւ կ'ուսումնասիրեմ հայկական հրատարակութիւնները, կամ բերանացի մեզի հասած պատումներն ու երգերը: Փորթուզալեանի «Արմէնիա» թերթի հինգ թիւերը պատահաբար գտայ Մարսիլիոյ գրադարանին մէջ. կարդացի եւ ուսումնասիրեցի, անոնք հիմա գրադարանիս մաս կը կազմեն: Այսքանը ընելով Թուրքիոյ մէջ զրգոթիւններ կատարած չեմ ըլլար: Հաւանաբար «Արմէնիա»ի թիւերէն քանի մը հատը *խաֆիէներ* տեսած եմ ձեռքիս, երբ բարեկամներու ցոյց կուտայի հետաքրքրութեան համար: Աշմարտութիւնը կը խօսիմ, «Արմէնիա»ն դասախօսութեան նիւթ չեմ դարձուցած ո՛չ ալ անդրադարձած եմ Փորթուզալեանին: Կը կրկնեմ, դասախօսութիւններու ժամանակ խօսած եմ մի միայն գրականութեան, արուեստի եւ

հոգեւոր հարցերու շուրջ: Չեր *խափէնքուն* տեղեկութիւնները շինծու են:

Ֆախրի Պէյ.- Երկար տարիներ դուրսը ապրելէ յետոյ, նոյնիսկ Երոսպա, ի՞նչու 1910-ին եկար Թուրքիա: Դուն միայն ծնունդով օսմանցի եղած ես. որպէս անհատ՝ նկարագիրդ կազմատրուած է այս երկրի սահմաններէն դուրս: Ո՞վ ուղարկեց քեզի այստեղ, օգտագործելով ծնունդով օսմանցի ըլլալու հանգամանքդ:

Կոմիտաս Վարդապետ.- Ես ծնած եմ այս երկրին մէջ: Դիշդ է, երկար ապրած եմ արտասահման, սակայն այժմ վերադարձած եմ: Կը ներէք, կը համարձակիմ ըսելու, թէ ոչ ոք իրատունք ունի հարցնելու ինձի, թէ ի՞նչու եկած եմ հայրենիքս: Այստեղ՝ իմ պապերուս, ծնողներուս եւ ի՛մ երկիրն է: Մենք՝ հայերս այս երկրին մշակոյթի ծաղկման համար մեր անգնահատելի բաժինը բերած ենք. թատրոնն ու երաժշտութիւնը զարգացում ապրած եւ արհեստավարժութեան մակարդակին հասած են հայերով. յիշեցէք՝ դերասաններ Պետրոս Աղամեանը, Վահրամ Փափազեանը, երաժիշտ Պապա Համբարձումը, ճարտարապետներու ամբողջ գերդաստան մը՝ Պալեանները, նոյնպէս հռչակաւոր ճարտարապետ Սինանը: Անուններու շարքը դէռ կարելի է երկարել:

Ֆախրի Պէյ.- Փափազ, շատ համարձակ սկսար խօսիլ: Օսմանեան իշխանութեան ներկայացուցիչին առջեւ կը գտնուիս, չափերոդ մէջ մնացիր: Զեզմէ առաջ հարցաքննուող *ռոմանթիկ* բանաստեղծ-յեղափոխականներն ալ փորձեցին տէր կանգնիլ Թուրքիոյ եւ թիպարեցին մինչեւ պատմութեան խորերը:

Կոմիտաս Վարդապետ.- Ես հոգեւորական եմ ու երաժիշտ, բայց թող յայտնի ըլլայ, թէ նաեւ Զեօքահեալի ծնունդ եմ: Բռնութիւն չեմ հանդուրժեր: Ինձի առանց պատճառի հասցուցած էք այստեղ եւ անտեղի մեղադրանքներով կ'ուզէք ծունկի բերել: Չեմ գար ծունկի: Այ որեւէ հարցումի չեմ պատասխաներ: Պատրիարքարան յոր թող տրուի, որպէսզի մեր փաստաբանը գայ եւ փաստաբանով խօսիմ ձեր հետ:

Ֆախրի Պէյ.- Ես այլեւս հարցում պիտի չիտամ, որ դուն ալ պատասխանես կամ ոչ: Իսկ պատրիարքարանը տեղեակ է

ձերքակալութենէդ, թող փաստաբան վարձէ. նայինք թէ քեզ ո՞ր փաստաբանը կը համարձակի պաշտպանել: Ի՞նչ փաստաբանի մասին է խօսքը փափագ: Պատերազմ է, պատերա՞զմ: Դեռ կը տեսնե՛ս: (*Դիմելով ճենկիզիմ*) Սեկուսարան տար Սողոմոն Սողոմոնեանին: Յետոյ անմիջապէս հինգ մեղադրեալներն ալ խիստ հսկողութեան տակ թող փոխադրուին կեղղտնացման կայան: (*Կոմիտաս Վարդապետի ձեռքերը կը կապուին եւ դուրս կուգան*):

* * *

(*Թալաաթ փաշայի գրասենեակը. Թալաաթ, Ֆախրի պէյ եւ Եոհաննէս Լեփսիուս*)

Թալաաթ.- Բարի եկաք գրասենեակս, *միսիս* Լեփսիուս: Ուրախ եմ ձեզ բնորոնելու այս յարկին տակ:

Եոհաննէս Լեփսիուս.- Շնորհակալ եմ փաշա այս ընդունելութեան համար, զոր տրամադրեցիք ձեր սոսլ ժամանակէն:

Թալաաթ.- Սենք մեր բարեկամներուն հանդէպ յարգանք ունինք: Կը յուսամ, որ դուք ձեզ մեր բարեկամներուն շարքին կը դասէք:

Ֆախրի Պէյ.- Ես իմ պաշտօնի բերումով (*խօսքը ուղղելով Թալաաթին*) ծանօթ եմ մեր այսօրուայ հիւրի գործունէութեան եւ արեւելագետի փաստակին: Իր գրութիւնները յաճախ անախորժութիւններ պատճառած են մեզի:

Եոհաննէս Լեփսիուս.- Ես հոգեւորական եմ եւ միեւնոյն ժամանակ արեւելագետ գիտնական, ինձ կը յուզեն յատկապէս Արեւելի իրադարձութիւնները: Գուցէ երբեք նուրբ հարցերու մասին քիչ մը սուր կը գրեմ:

Թալաաթ.- Մեզ նոյնպէս կը յուզէ Արեւելըը: Սակայն առաւել ես կը յուզէ Արեւելի մէջ գտնուող Թուրքիան, մասնատրապէս անոր անվտանգութիւնը:

Ֆախրի Պէյ.- Ծանօթ է, թէ պատերազմ է եւ մենք դաշնակից ենք ձեր պետութեան *միսիս* Լեփսիուս: Առկայ պայմաններու տակ, Գերմանիոյ ազնիւ քաղաքացիներէն փոխադարձ կեցուածք կ'ակնկալենք: Հաւանաբար կը հասկնաք, վերջին հաշուով ի՞նչ բանի կ'ակնարկեմ:

Շոհաննես Լեփսիոս.- Ակնարկությունդ հասկնալի է հազարապետ: Մակայն առաջին անգամը չէ, որ ես եւ Թուրքիոյ եւ յատկապէս Իտտիհատի պատասխանատուներուն հետ եռես առ երես կուգամ, ինձ յուզող կարեւոր հարցերով:

Թալաաթ.- Այո, դուն մեզ հետ կը հանդիպիս ոչ միայն երես առ երես, նաեւ զիրքերով: «Հայաստանը եւ Եւրոպան» ձեր աշխատութիւնը մեր պետութեան դէմ պատմական ու քաղաքական մարտահրաւեր է: Ներեցէք այսպիսի ընգծում կատարելու համար:

Շոհաննես Լեփսիոս.- Փաշա, խօսեցաք գրուած գրքի մը մասին, զոր մարտահրաւեր կը կոչէք ընդդէմ Թուրքիոյ, բայց այդ գրքի բովանդակութեան ուղղութեամբ ակնարկութիւն չկար: Եթէ ծանօթ էք աշխատութեանս, կը նշանակէ, թէ ձեր համապատասխան մարմիններն ու աշխատակիցները վերլուծած են ձեզ համար:

Ֆարի Պէյ.- «Հայաստանը եւ Եւրոպան» աշխատութեան ծանօթ ենք բոլորս ալ: Այն միակողմանի մօտեցում է քննարկուող հարցերուն:

Թալաաթ.- Ինչպէս Ֆախրի պէյը ըսաւ, մեր երկրի ղեկավարութիւնը ծանօթ է ոչ միայն վերոյիշեալ գրքին, նաեւ ձեր ամբողջ գործունէութեան Թուրքիոյ սահմաններէն ներս: Եւ պարզապէս կը ցաւինք, որ գերմանացի մը այդպիսի ընթացքի մէջ է:

Շոհաննես Լեփսիոս.- Դուք յիշեցիք «Հայաստան եւ Եւրոպան» աշխատութիւնս, ես պիտի արեւցնեմ նաեւ «Տեղեկագիր հայ ժողովուրդի կացութեան մասին Թուրքիոյ մէջ» աշխատութիւնս: Այդ «տեղեկագիրը» եղելութիւններու եւ անհերքելի փաստերու ժողովածու է: Կը ցաւիմ, որ Թուրքիան սուրբանի չէ-գոքացումէն յետոյ եւս կը շարունակէ՝ աշխատասէր ու շինարար հայ ժողովուրդի հալածանքը: Իմ գերմանացի լլկալս ինձ չարգիլեր ձեր կատարած ծանր սխալներուն մասին խօսիլ եւ գրել:

Թալաաթ.- Մենք մեր քաղաքացիները չենք հալածեր, այլ կարգի կը հրաւիրենք պետութեան ապահովութեան վտանգ ներկայացնողները:

Ֆախրի Պէյ.- Դուք եթէ հոգեւորական էք, յեղափոխականներու, հակապետական շարժումներուն զօրավիգ պիտի չկանգնիք:

Թալաաթ.- Ես Աստուածաշունչին, յատկապէս Նոր Կտակարանին բառականաչափ ծանօթ եմ. այնտեղ պատուէր կայ, թէ քաղաքացիները հնազանդ պիտի ըլլան իշխանութիւններուն, որովհետեւ իրաքանչիւր իշխանութիւն Աստուծոյ կողմէ տրուած է:

Եռհաննէս Լեփսիու.- Մեջքերուած խօսքերուն հեղինակը Պօղոս Առաքեալն է փաշա, քրիստոնէութեան մեծ տեսաբանը: Սակայն դուք երկու չափ եւ երկու կշիռ կը գործածէք: Առաքեալին տուած խորհուրդը ժողովուրդին՝ կը փորձէք մեկնաբանել իրովի, ըստ կամս եւ անոր խօսքերուն իմաստը ամբողջութեամբ կ'աղլաաղէք: Չե՞ր յիշատակած Նոր Կտակարանին մէջ տեղ մը գրուած է արդեօք, որ իշխանութիւն մը իրատուք ունի իր քաղաքացիները սովի մատնելու, հալածելու, զանգուածաբար աքսորելու, ջարդելու կամ խտրականութիւն դնելու անոնց միջեւ:

Թալաաթ.- Ես բառական ժամանակ յատկացուցի այս հանդիպման համար: Չեմ գիտեր, արդեօ՞ք, գոհացուցի ձեզի: Աւելցնելիք ուրիշ բան ունի՞ք *միսիւ* Լեփսիուս:

Եռհաննէս Լեփսիու.- Իմ ա'յս հանդիպման նպատակը, Ստանպուլի մէջ հայ մտաւորականներուն ձերբակալման կ'առնչուի, անշուշտ առանց մոռնալու համայն Թուրքիոյ մէջ ի գործ դրուած բոլոր հալածանքը հայերու դէմ:

Ֆախրի Պէյ.- Թոյլ տուէք փաշա, որ նախ ես պատասխանեմ. այդ մտաւորականներ կոչուածներուն հարցաբնութիւնները անձամբ կատարեցի, որպէս օսմանեան պետութեան ապահովութեան պատասխանատու: Բոլոր հարաբնուողներն ալ պաշտպանութեան արժանի չեն: Կ'աշխատին Թուրքիան մասնատել: Սեր հիւրը թող լա՛ հասկնայ այս պարագան:

Թալաաթ.- Կը ցաւիմ, որ նոյն առաքելութիւնը կը շարունակուի. այսինքն անարժան տարրերու պաշտպանութեան հետամուտ է մեր այսօրուայ հիւրը: Հակահայ այն հալածանքը, որուն կ'ակ-

նարկէք *միտիս* Լեփիուս, յեղափոխական խմբատրումներու աղմուկն է:

Եռհաննէս Լեփիսիուս.- Բայց գաղտնիք չէ, անմեղ ժողովուրդի մը, այսինքն օսմանեան կայսրութեան հայ բնակչութեան դէմ արքար ու եղեռն ի գործ կը դրուի: Փաշա, մանրամասնութիւնները դուք ատելի լաւ գիտէք եւ ի վիճակի էք առաջքն առնելու այս ահաւոր ողբերգութեան: Իսկ ձեր ատելի քան երկու միլիոն հաշուող հայ քաղաքացիները անարժան տարր որակելը անհամատեղելի է տրամաբանութեան հետ:

Թալաաթ.- Դուք հասկցող մարդ էք *միտիս* Լեփիսիուս: Համաշխարհային պատերազմ կը մղուի եւ մեր պետութիւնը մասնակից է այդ պատերազմին. ամէն գնով պիտի պաշտպանենք երկրի արեւելեան սահմանները, ինչպէս նաեւ պիտի հսկենք ու անվտանգ դարձնենք Սեւ Ծովն ու Միջերկրական ծովը իրար միացնող նեղուցները: Յիշեալ նեղուցներն ու անոնց հսկողութիւնը օսմանեան կայսրութեան կարետրագոյն ռազմավարութիւնը եղած է պատմութեան ընթացքին: Բացառիկ է Թուրքիոյ աշխարհագրական դիրքը, իսկ մենք գիտենք արժետուել մենք մեզ: Ուրեմն այս օրերուն՝ «եղեռն», «ողբերգութիւն», «արքար» եւ նման միտքեր արժարժելը անտեղի է: Կա՛մ մենք, կա՛մ մեր թշնամիները: Ու յայտնեմ այս պահուս, թէ որոնց պաշտպանութիւնը որ ստանձնած էք, մեր թշնամիներն են: Այսքանը թող հասկնալի ըլլայ:

Ֆախրի Պէյ.- Օսմանեան զինուորական դատարանը, մեղադրուած մտատրականներուն համար արդէն տուած է իր վճիռները եւ մեր կողմէ միջամտելը դատարանի գործերուն, այն ալ ներկայ պայմաններուն տակ, քաղաքական կատարեալ անխտենմութիւն պիտի ըլլայ:

Եռհաննէս Լեփիսիուս.- Նոյնիսկ եթէ համաշխարհային պատերազմ է, ի վիճակի եմ բողոքի ալիք ստեղծելու: Չերբակալուած եւ արքարուած մտատրականներուն ամենասարսափելին կը սպասէ, ես իմ եզրակացութիւնս ունիմ արդէն: Սակայն փաշա, դուք մեծ իշխանութիւն ունիք նոյնիսկ դատարանի վճռիներուն մէջ ձեր հեղինակութեամբ փոփոխութիւն մտցնելու: Խնայեցէ՛ք

ծեր հայ քաղաքացիներուն եւ անոնց մտքի մեծութիւններուն, հակառակ պարագային պատմութիւնը ձեզ պիտի չներէ:

Ֆախրի Պէյ.- Ես այս պետութեան ապահովութեան պատասխանատուն եմ: Նորէն կը յայտարարեմ, թէ դատարանի որոշումները անբեկանելի են:

Թալաթ.- Ես ալ կը կրկնեմ նոյն միտքը: Աւելցնեմ միեւնոյն ժամանակ, որ պատերազմներու ընթացքին հարցերը խլաճով չեն լուծուիր: Եթէ մենք չհարուածենք, դիմացինը մեզ կը հարուածէ: Ուժը, յաճախ մաւր դաժա՛ն ուժը յաղթանակներու եւ յաջողութիւններու միակ բանալին է:

Շոհաննէս Լեփսիու.- Բայց դէպի անապատ կատարուած արտոբներուն մէջ հիւժած, իր տունն ու տեղը կորսնցուցած, եղեռնի ենթարկուած եւ մահուան իովիտէն անցնող ժողովուրդ մը ի՞նչ վտանգ կրնայ ներկայացնել օսմանեան կայսրութեան: Դուք ա՞յս աստիճան սարսափի մէջ կ'ապրիք, որ հայու ուրուականէն իսկ կը վախճաք:

Թալաթ.- Եթէ նոյնիսկ վտանգ չէ, գլխացաւա՛նք է Հայկական Հարցը: Մենք վերջ պիտի տանք այդ հարց-գլխացաւանքին: Պիտի ապահովենք մեր թիկունքը: Վերջին հաշուով, Թուրքիոյ միջոցով պիտի որոշուի այս պատերազմին ելքը: Մենք Լզօր պետութիւն ենք: Եւրոպացի մեր դաշնակիցներու հայեացքները դէպի Թուրքիա է:

Ֆախրի Պէյ.- Եթէ եւրոպական տէրութիւնները, կամ անհատ եւրոպացիները լաւապէս ծանօթանան հայերու հեռակայ ծրագիրներուն, անոնց քաղաքական ուժերու վերջ չունեցող գործունէութիւններուն, պիտի չուզէին անոնցմով հետաքրքրուի:

Շոհաննէս Լեփսիու.- Եթէ պատմութեան ծանօթանաք եւ լաւապէս ընկալել, ընդունիլ իրականութիւնները, դուք եւս պիտի համոզուիք, որ բոլոր ըմբոստութիւնները եւ յեղափոխութիւնները պատճառներու հետեւանքներ են: Որպէսզի հետեւանքը վերացուի, մախապէս պիտի վերացուի պատճառը:

Թալաթ.- Այսինքն ի՞նչ ուզել կ'ուզէք. Անատոլուն հայերո՞ւն տանք:

Ֆախրի Պէյ.- Փաշաս, եթէ Անատոլուն տաս (*հեզմակլամ*) դեռ ուրիշ բանէ՛ր ալ կը պահանջեն: Թագաւորութիւն կ'երազեն հայերը:

Շոհաննէս Լեփսիու.- Ես այս պահուս չեմ եկած վիճելի հարցեր լուծելու: Իմ խոր մտահոգութիւնս տառապող, հիւժող ու

եաթաղանի մատնուած ժողովուրդի մը ճակատագիրն է: Պիտի օգնենք անոնց ամէն գնով:

Թալաաթ.- Հարցը շատ մի մեծցնէք *միսի* Լեփսիոս: Պատերազմի հետեւանքով սահմանային գօտիներէն տեղահանութիւններ կան, օսմանեան պետութեան ապահովութենէն ելլելով: Նման տեղահանութիւններու ժամանակ ամէն բան կը պատահի: Ճակատներու վրայ տասնեակ հազարաւոր մարդիկ կը մեռնին: Զանի մը հազար հայ մեռեր է, ի՛նչ է, մե՞ծ բան է:

Եռհաննէս Լեփսիոս.- Եթէ մէկ անմեղ մարդ իսկ անարադարօրէն կառափնաստ կը տարուի, յանցագործութիւն է: Իսկ եթէ հնարաւորութիւն կայ անմեղ դատապարտեալը ազատելու, բայց ձեռնծալ կը մնանք, նոյնպէս յանցագործութիւն է: Փաշա, այս պահուս անգամ մը ես կը խնդրեմ, որ ելք գտէք վերջ տալու հայերու սպանդին եւ անյապաղ ազատեցէք այն հայ մտաւորականները, որոնք արդէն արքորի մէջ են ու անոնց ներկայ կացութիւնը ցարդ յայտնի չէ ինծի, սակայն համոզուած եմ, որ անոնց մահ կը սպասէ:

Թալաաթ.- Բիչ առաջ Ֆախրի պէյը ըսաւ՝ դատարանը տուած է իր վճիռը եւ ես չեմ ուզեր միջամտել արդարադատութեան գործերուն:

Ֆախրի Պէյ.- Եթէ դատարանի գործերուն միջամտելու հարց պիտի ծագի, այդ միջամտութեան բարիքէն նախ պիտի օգտուին օսմանցի այն քաղաքացիները, որոնք սխալմամբ, երբեմն նաեւ սկամայ յանցագործներ դարձած են: Ի՞նչու նախապատուութիւն տալ հակապետական տարրերուն: Բերուած առաջարկը տրամաբանակն չեմ գտներ ես:

Եռհան Լեփսիոս.- Առաջարկս վերջին անգամ կը կրկնեմ: Եր մը գտէք գոնէ արքորուած մտաւորականները ազատելու համար: Անոնք բոլորն ալ Ստանպուլի բնակիչներ են, ուրեմն՝ սահմանային գօտիներէն հեռու կ'ապրին: Պատերազմի պատճառարանութիւնը այս մարդոց հետ չառնչուիր: Վերջ սուրբ նաեւ զուտոններէն կատարօսող արքորներուն: Տէր Զօրի անպատը լեցուն է հայ զաղթականներով՝ կին, երեխայ, ծերունիներ կը կիւծին անօրի ու ծարաւ. իսկ երիտասարդները աշխատանքային ճամբարներուն մէջ վերջին հաշուով կը մահանան,

գոհերը դառնալով անտանելի պայմաններու եւ եաթաղանի: Ո՞ր է մարդկային խիղճը:

Ֆախրի Պէյ.- Փաշաս, յիշեցում մը կատարեմ, պաշտպանութեան նախարարութիւն մինչեւ հիմա հասած կ'ըլլայ ռազմաճակատի գործողութիւններուն ամփոփագիրը: Պէտք է մեկնինք: Ուշ է:

Թալասթ.- Քանի մը վայրկեան ալ սպասէ, Ֆախրի':

Տոհաննէս Լեփսիուս.- Փաշա, նաման հարցերու մասին որոշում կայացնելու համար ժամանակ մի կորսցնէք: Առանձնապէս կը ցաւիմ Կոմիտաս Վարդապետին համար: Ան հոգեւորական է եւ արուեստի նուիրուած մարդ: Ի՞նչ յանցանք կրնայ գործած ըլլալ:

Ֆախրի Պէյ.- Սողոմոն Սողոմոնեանը, կամ Կոմիտաս Վարդապետը վտանգատր է բոլորին նման: Ի՞նչ ընենք, որ հոգեւորական է:

Թալասթ.- (*Պահ մը գլուխը ափերուն մէջ առած կը սկսի մտածել. ապա խօսքը ուղղելով Լեփսիուսին*): Ձեր խնդրանքը հիմնականին մէջ կտրականապէս կը մերժեմ: Պետութեան ապահովութիւնն ամէն բանէ վեր է: Աքսորուած մտաւորականները իրենց հակապետական արարքներուն համար դատարանին որոշած պատիժները պիտի կրեն: Սիայն, կ'աշխատիմ հոգեւորական Սողոմոն Սողոմոնեանը արքորէն վերադարձը ձեռով մը ապափովել: Հայերուն առնչուող հարցերով հետս բազմաթիւ հանդիպումներ ունեցեցաւ նաեւ Ամերիկայի դեսպան Հենրի Մորկընթաուն: Երէկ ան ինձմէ խնդրեց Կոմիտասի վերադարձը՝ արքորէն: Արդ, Կոմիտաս հոգեւորականին ներում բերելով, կը յուսամ գոհացնել մեր գերմանացի ու ամերիկացի բարեկամները: Այսբանը միայն, *միսիւ Լեփսիուս* եւ համոզուեցէք, թէ մեր մօտ բարեացակամութիւն գոյութիւն ունի: (*Թալասթ եւ Ֆախրի ոտքի կ'ելլեն. ոտքի կ'ելլէ նաեւ Լեփսիուս եւ դանդաղ քայլերով կը սկսի հեռանալ*):

Ֆախրի Պէյ.- Կը մեկնիս, *միսիւ Լեփսիուս*, սակայն վաշային շնորհակալութիւն մը իսկ չյայտնեցիր Կոմիտասին տրուած շնորհքին համար:

Եռեաննէս Լեփսիոս.- *(Պահ մը կը կազմի, զննող հայեացքով կը նայի Թալաաթին եւ Ֆախրի պէյին):* Հանազամանքէս մեկնելով ձեզի կ'ըսեն՝ մնացէք խաղաղութեամբ: Բայց արդեօ՞ք կրնաք հոգեկան խաղաղութիւն ունենալ: Փաշա', ստեղծագործող ժողովուրդ մը կը հիւծի, կը տառապի, կը մահանայ Թուրքիոյ սահմաններէն ներս եւ անոր գոյութիւնը սպառնալիքի տակ է: Համաշխարհային քաղաքկրթութեան փայլուն էջերէն մէկը արիւնով պատած է: Ասոր Տեղասպանութիւն կ'ըսեն, այսինքն՝ Եղեռն, նոյնիսկ՝ Մե'ծ Եղեռն: *(Լեփսիոս դանդաղ քայլերով դուրս կուգայ):*

Թալաաթ.- Ֆախրի պէյ, զեկուցմանդ մէջ գրուած էր, թէ Կոմիտաս հասած է Չանղըրը:

Ֆախրի Պէյ.- Այո, Կոմիտաս հասած է Չանղըրը, Չօհրապ, Վարուժան Չիպուզքեարեան եւ Ռուբէն Չիլինկիբեան նոյնպէս: Ատոմ Եարճանեան կը գտնուի Այաշ: Ան եւս շուտով Չանղըրի մէջ կը միանայ միւսներուն: Հրահանգուած է մտաւորականութեան հետ հարցերը լուծել այնտեղ: Չանղըրը մեկուսի, անապատային վայր է:

Թալաաթ.- Սողոմոն Սողոմոնեանը արտօրէն վերադարձնելու հրամանագիրը հիմա կը ստորագրեն: Հեռագրէ, Ֆախրի' *(Թալաաթ՝ դաժան քայց մտահոգ տեսք ունի)* այդ շրջանի հրամանատարին, որպէսզի Կոմիտաս վարդապետ կոչեցեալը շուտով Ստամպուլ վերադարձնէ: Երբ հասնի Ստամպուլ, խորհուրդ թող տրուի անոր՝ ամիջապէս հեռանալու Թուրքիոյ սահմաններէն: Իրեն համար այս երկրէն հեռանալը՝ վերջնական ազատելու միակ ելքն է: Մնացեալներուն հաշուեյարդարը թող արագացուի: Այո', թող արագացուի Ֆախրի. մարդասիրութիւն հետապնդող երոպացիները դեռ կրնան ուրիշ գլխացաւանքներ պատճառել ինծի:

(Վարագոյր):

* * *

(Բենի առաջամասին վրայ կրկին կը յայտնուին առաջին եւ երկրորդ պատմողները:)

Առաջին Պատմող.- (Յասմիկ) Մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմ աւարտը ամայացաւ Արեւմտեան Հայաստանը: Մէկուկէս միլիոն անմեղ հայեր զոհը եղան Մեծ Եղեռնին: Տեղի ունեցաւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը:

Երկրորդ Պատմող.- (Համաափիւ) Իսկ Ահարոնեան պատգամեց՝

Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք

Թող ողջ աշխարհ կարդայ հայուն նախատինք:

Առաջին Պատմող.- (Յասմիկ) Հայոց Մեծ Եղեռնը կազմակերպողներն անպատիժ չմնացին: Առաջին Աշխարհամարտի պարտուողներու շարքին էր նաեւ օսմանեան Թուրքիան: Մեծամիտ ու պարտուած Թալաթ փախուստի դիմեց, շունչը առաւ Պեռլին եւ նոյն քաղաքսին մէջ իր կեանքով հատուցեց մարդկութեան դէմ կատարած մեծ ոճիրը: Սողոմոն Թեհլէրեան հայ ժողովուրդի վրիժառու բազուկը եղաւ, զգտնելով Թալաթ կոչուած դահիճը: Այլ վայրերու մէջ, Էնվեր եւ Ճեմալ արժանացան միեւնոյն ճակատագրին, հայ տարբեր վրիժառուներու հարուածներով:

Երկրորդ Պատմող.- Եւ գերմանական դատարանը ազատ արձակեց Սողոմոն Թեհլէրեանը: Զանգի վրիժառուն, Մեծ Եղեռնի ընթացքին, իր հարազատներու մահուան տառապանքին ու սարսափի անդոհանքին մէջ կատարած էր գործողութիւնը: Ուստի դատարանին առջեւ կատարելապէս անմեղ էր ան:

Առաջին Պատմող.- (Յասմիկ).- Սողոմոն Թեհլէրեանին՝

Իսկ դուն՝ անողոր հատուցման ժամուն

Մեր տարածամող կամքը դարբնեցիր

Դ-ո՛ւն փիլիսոփայ, խորհող իմաստուն

Դ-ո՛ւն պարզ հայորդի հրացանակիր,

Պատուի՛ որմնադիր Թուրքիայէն Պեռլին

Մինչեւ աշխարհի ծագերը բոլոր,

Մենք աշակերտներ քու քաջ բազուկին:

Հիմա հեռաւոր ցուրտ շիրիմի տակ

Ի՞նչպէս կը ննջես անհանգիստ ոգի

Հանգիստ չունէիր, աչքերուդ կրակ

Մինչեւ վայրկեանը մեծ պատարագի...:

[40077]

Եւ այսօր նորէն դուն հանգիստ չունիս
Վիպերզն ես հողի՛, շանթահարողի՛,
Առաջին օրէն՝ դուն պարծանք ազգիս
Հասկցար ուժը ձուլուած մետաղի:

Երկրորդ Պատմող.- (Համասփիտ) Թալաաթ, իր փառքի օրե-
րուն յայտարանց, թէ մէկ հայ պիտի պահէ աշխարհի երեսին,
այն ալ քանգարանի համար: Բայց այսօր կայ ու կ'ապրի հա-
յը, ունի իր անկախ պետականութիւնը: Հայը կը շարունակէ
ստեղծագործել, կառուցել: Կառուցեց քաղաքամայր Երևանը,
երկինք խոյացաւ Սեժ Եղեռնին զոհուած մէկուկէս միլիոն հա-
յերու յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշարձանը:
Առաջին Պատմող.- (Յասմիկ) Հայը կը շարունակէ վերակա-
ռուցել իր անկախ հայրենիքը: Հայաստան երկիրը կը յարզէ իր
հարեւանները եւ ի սրտէ կը ցանակայ ապրիլ արժանապատիւ
խաղաղութեան մէջ: Հայը շատ աւելի լաւ կը հասկնայ խաղա-
ղութեան արժէքը եւ կը գուրգուրայ անոր վրայ:

Երկրորդ Պատմող.- (Համասփիտ) Այո, հայը ջերմօրէն կը փա-
փաքի ապրիլ խաղաղութեան մէջ, սակայն առանց մոռնալու իր
մէկուկէս միլիան նահատակներուն յիշատակը: *Այսքան չարիք
թէ մոռանան մեր սրդիր, բող ողջ աշխարհ կարողայ հայուն նա-
խատիւնը:*

Առաջին Պատմող.- (Յասմիկ) Այն ժողովուրդները, որոնք
տակաւին չեն ընդունած Հայոց Յեղասպանութեան փաստը,
կ'ակնկալենք, որ ընդունին շուտով: 90 տարի սպասելը բաւա-
րար չէ՞ միթէ...:

Երկրորդ Պատմող.- (Համասփիտ) Արդարութիւնը պիտի յաղ-
թանկէ օր մը եւ այդ յաղթանակը կատարեալ պիտի ըլլայ՝
Այբէն մինչեւ Ֆէ, այսինքն՝ Ալֆայէն մինչեւ Օմեղայ:

Առաջին Պատմող.- (Յասմիկ) Անգամ մը եւս լսենք մեծն
Չայենցի պատգամը՝ Հայ ժողովուրդ, քո փրկութիւնը, քո
միասնականութեան մէջ է:

(Վարագոյր եւ Վերջ)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090289

A^π
90289